UNIVERSITY OF TORONTO
3 1761 01280762 4

Byron, George Gordon Noël Byron
Childe Harold's pilgrimage: Italy

PR
4357
A1
1860

LORD BYRON

CHILDE HAROLD'S PILGRIMAGE

CANTO THE FOURTH

VENICE

IN THE ISLAND OF S. LAZARUS.

1860

The J. C. Saul Collection
of
Nineteenth Century
English Literature

Purchased in part
through a contribution to the
Library Funds made by the
Department of English in
University College.

Sidney Brooks
c/o San Lazzaro. Venice

LORD BYRON

May. 3. 1862

CHILDE HAROLD'S PILGRIMAGE

ITALY

381283
3. 6. 40

VENICE

PRINTED

AT THE ARMENIAN MONASTERY OF S. LAZARUS

1860

PR
4357
A1
1860

Ի. ՏԱԼԻԱՆ

ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍԲՐՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ
1860

Ա.Զ.Դ

Ոչ ընդ նշանաւորս միայն քերդողաց դարուս, այլ եւ առաջին ի նոսին վկայեալ է ի յոլովից գիտնոց՝ ՊԱՅՐՈՆ Անգղիացի. զորոյ ճաշակս քերդուածոց մատուցեալք երբեմն մերազնեայցս ի ծաղկաքաղս ուրեք. իսկ այժմ ընծայեմք զընտրելագոյնն մասն համօրէն գրուածոց նորին, որ է յետին կամ Չորրորդ երգ անուանեալ քերդուածեանն ՊԱՆԴԻՏՈՒԹԻՒՆ ՀԱՐՈՒԼԴԱՑ ԱՍՊԵՏԻ, **Childe Harold's Pilgrimage.** յորում գիտալիս նկարագրէ, թէ եւ ոչ բովանդակ, վասն այնորիկ եւ ԻՏԱԼԻԱ կոչեցաք զհրատարակեալս առ ի մէնջ զերգս զայս: Հռչակ քերդողին եւ քերդուածոյն, նեւթ բանիցն՝ որ է անմահ յիշատակն Իտալիա, վեհագոյն ի գեղատպատիս աշխարհս նորոց գարուց, եւ ստէպ այցելուածիւնք հոմանիներայց քերդողին ի դրուատեալսն առ ի նմանէ վայրս, եւ մանաւանդ ի նախակարգեալն ի գլուխ երգոյն՝ ի Վենետիկ, յորում եւ մեզ եհաս պանդխտել հուսոյ կամաք եւ երկրորդ ատանալ հայ-

բենիս, ի նմին իսկ ի քաղաքի՝ յորում եւ մեռան ինչ երիցս յօրինեալ է ի բանաստեղծէն, եւ դիմովին ի կղզւոջ մենաստանի՝ որում յաշխա նա յայց ելանէր՝ մինչդեռ Պանդուխտն իւր Թափառէր տակաւին յանեբեւոյթ հրապարակս մտաց իւրոց· այս ամենայն ոչ փոքր յորդոր էր ի ձեռնարկութիւն Թարգմանութեան, այլ ոչ համարձակ բաւական, եթէ ոչ հարկ ինն ի վերայ գնէր մեզ մերս իսկ նժդեհութիւն ի հայրենիս անդր քերդողին, ուր առաւել քան զյօժարութիւն յամեալ, զտաղտուկ օտարութեանս այսպիսեաւ ինն կամեցայ ափոփել կամ տանջել՝ ոչ դիւրաթափ Թարգմանութեամբ· սոյնպիսի ինն հնարս հնարեալ եւ հեղինակին երբեմն՝ արկանէր զանձն ի փորձ եւ ի ոտյժ՝ ուսանել զմերս հայերէն դժուարագիւտ բարբառ, ի մերում իսկ դրան վանաց: Բայց զի շատ հեռի է Թարգմանողս որպէս ի Ճարտարութենէ հեղինակին նոյն եւ ի խորհրդոց եւ ի դիտանց նորին, պարտս

անձին վարկանի ծանուցանել ընթերցանելեաց և դա-
տասերաց, զի ոքան եւ սիրող եւ պատուող իցէ կամ
էր ստեղծաբան եւ խորհմաց հանճարոյ քերդողին,
այնքան եւ առեցող Թերայոյս եւ սակաւահաւատ ո-
գւոյն, զոր եւ ուրեք ուրեք նշանակէ՝ զեղծմամբ նո-
րայոցն ասից կամ ծանօթուԹեամբք եւ կամ լուս-
Թեամբ իսկ • զի ողջամտացն յայտ յանդիման կան
մեղմեխանքն :

Իսկ վասն ոՀոյ ԹարգմանուԹեանս ոչ ունիմ
այլ ինչ ասել, բայց ի գիտողս երկաքանչիւր լեզուացն
Թողուլ զդատաստան, եւ յանձն առնուլ զպարտու-
Թիւն՝ եԹէ ուրեք ոչ իցեմ քաջ ի վերայ հասեալ բա-
նից քերդողին, որ չէ պարզաԽօս եւ դիւրափոխելի՝
որպէս զայլս ի քերդողաց եւ զնոր իսկ համազգիս հե-
տեւողս նախնեացն եւ կտակարանաց ոՀոյ :

ITALY

Italia! too, Italia! looking on thee,
Full flashes on the soul the light of ages,
Since the fierce Carthaginian almost won thee,
To the last halo of the chiefs and sages
Who glorify thy consacrated pages;
Thou wert the throne and grave of empires; still,
The fount at which the panting mind assuages
Her thirst of knowledge, quaffing there her fill,
Flows from the eternal source of Rome's imperial hill.

Ի Տ Ա Լ Ի Ա

Ո՛հ, Իտալի Իտալի, Ճաճանչ դարուց անցելոց [1]
Հառագայթե ի հոգիս ուշով ի քեզն յառելոց,
Ի Պունիկեան Գոռոզէն [2] որ խուն մ՚ եւ զքեզ նըւաճէր՝
Մինչ ի յետին լուսապսակ վարչաց քոյոց ու իմաստնոց,
Որք յաճախեն փառըս մեծ քոց դիւանաց սըրբանուէր.
Դու պետութեանց հանապազ եղեր եւ գահ եւ գամբան.
Նա եւ այժմիկ ծարաւեալ ոգիք առ ումմ գիտութեան
Ի վերհաչուքըն Հռովմայ երթեալ դիմեն ի դիտակ՝
Յորմէ բըղխէ յարահոս անմահարբքըն վըտակ։

I

I stood in Venice, on the Bridge of Sighs;
A palace and a prison on each hand:
I saw from out the wave her structures rise
As from the stroke of the enchanter's wand:
A thousand years their cloudy wings expand
Around me, and dying Glory smiles
O'er the far times, when many a subject land
Look'd to the winged Lion's marble piles,
Where Venice sate in state, throned on her hundred isles!

II

She looks a sea Cybele, fresh from ocean,
Rising with her tiara of proud towers
At airy distance, with majestic motion,
A ruler of the waters and their powers:
And such she was;—her daughters had their dowers
From spoils of nations, and the exhaustless East
Pour'd in her lap all gems in sparkling showers.
In purple was she robed, and of her feast
Monarchs partook, and deem'd their dignity increased.

III

In Venice Tasso's echoes are no more,
And silent rows the songless gondolier;
Her palaces are crumbling to the shore,
And music meets not always now the ear:
Those days are gone — but Beauty still is here.
States fall, arts fade — but Nature doth not die,
Nor yet forget how Venice once was dear,
The pleasant place of all festivity,
The revel of the earth, the masque of Italy!

Ա.

Ալաչ երբեմն ի կամուրջն Հառաչանաց ի վընեէժ [3].
Պալատ աստի ամբառնայր եւ տուն բանտի՝ Հանդիպոյց.
Տեսի գշինուածքն նորին ընդ նիւս ալեաց բարձրուղէշ
Իբր յեղակարծ ի բարձանց գիւթականին Հարուածոյ։
Պառակալապատ թափառին Հազարք ամաց շուրջ զինեւ.
Փառք նուաղելք ծաղը արձակեն զամանակօքըն նախկին՝
Մինչդեռ գաւառք նըւաճեալք ի հեռուստ ակնարկէին
Ի թեւատանձ առիւծունս ի ծագըս սեանցըն կըճեայց,
Ցորժամ՝ վընեէժ ի հարիւրս իւր բազմեր գահըս կըղզեաց։

Բ.

Որպէս Կիւբել [4] ծովային ի զով ալեացն Ովկեանոս
Բարձեալ գլուխ խոյրազգեաց բրգազարդիկ բարձրայօն
Ի հեռաստան օգաճեմ վըսեմական տարազու՝
Ջուրց եւ ջրոց պետութեանց արկանելով սանձ ըզգօն.
Աչգոյն նազեր նա, և տայր պաշտաւտական դաւերաց
Ջաւար ազգաց եւ ազանց. եւ արեւելք անըսպառ
Ճապաղէին առ ոտիւքն ազգ ազգ ականըս պայծառս.
Ինքն ըզգենոյր ծիրանիս ու առներ կոչունս արքայից,
Եւ էին փառք մեծամեծք լինել նըմին հացակից։

Գ.

Այլ ոչ հընչէին արդ ի վընեէժ երդոց Դաստոյ [5] արձագանգք.
Լըռիկ ու աներգ թիարկէ կոնատավարըն մանուկ.
Ջակտին կործան յեզը ափանց խըրոց չընչաղըն ապարանք,
Ոչ ևս ըստէպ գուռանաց բաղխի առ ունկըն շըշուկ.
Անցեալ գնացին այն աւուրք. գեղեցկուհիւն մընայ գեռ.
Խամրին արուեստք, գըմիւն գահ, Բընութիւն կեայ յաւիտեան.
Եւ ոչ է մարթի մոռանալ՝ քանի՛ սիրուն վընեէժն այն՝ [տեան.
Էր խրախճան համախուռն ամենազան տօնահեղտ,
Ըզգեսաբան աշխարհի, ու խոսլիոյ միմբ զաւեշտ։

IV

But unto us she hath a spell beyond
Her name in story, and her long array
Of mighty shadows, whose dim forms despond
Above the dogeless city's vanish'd sway;
Ours is a trophy which will not decay
With the Rialto; Shylock and the Moor,
And Pierre, can not be swept or worn away —
The keystones of the arch! though all were o'er,
For us repeopled were the solitary shore.

V

The beings of the mind are not of clay;
Essentially immortal, they create
And multiply in us a brighter ray
And more beloved existence: that which Fate
Prohibits to dull life, in this our state
Of mortal bondage, by these spirits supplied
First exiles, then replaces what we hate;
Watering the heart whose early flowers have died,
And with a fresher growth replenishing the void.

VI

Such is the refuge of our youth and age,
The first from Hope, the last from Vacancy;
And this worn feeling peoples many a page,
And, may be, that which grows beneath mine eye:
Yet there are things whose strong reality
Outshines our fairy-land; in shape and hues
More beautiful than our fantastic sky,
And the strange constellations which the Muse
O'er her wild universe is skilful to diffuse:

Դ

Այլ է մեր անդ յիշատակ քան ըզդիպացոյ պատմական
Եւ քան զերկայն ըզդատաին ուրուականաց քաջածին
Որք թաղձադէմք ի սգի ակընկորեալք տրխուրք կան
Ընդ ապաշուքըն քնքշանս դըքսակորոյս քաղաքին։
Աբբան յաղթից անվըհատ քան Ռիալդոյ [6] է մեր անդ,
Շալըզդ, Մովբիկ, եւ Պետրիկ [7], սոք ՚անաղարտ անկորուստ
Յամենաճախ մընայցեն ժամանակէն մեզ պահուստ.
Անկիւնակալք կամարաց, թէ եւ անկցի ընաւ տապաստ՝
Սգօքք՝ ափունքս ամպիքք՝ մեզ մարդաբնակք իցեն աստ։

Ե

Գանգն հաստատուածք մըտաւորք ոչ ի կատոյ զանգանին.
Անմահականք ի ըմնուստ՝ ստեղծուն ու ածել տան ի մեզ
Ըզլուսափայլ ճառագայթս եւ էութիւնս սիրային.
Ու այն զոր ժըխտէ բանտ կենացս ի ցաւագին աստղակէզ
Մեռելութեանն օրինօք կաշկանդելով անհամբոյր,
Օժանդակեալ զօրութեամբ ամընըկանաս այս ոգեաց
Մերժէ ի մենջ նախ, ու ապա լընու զտեղի ստեղեաց.
Այրուցանէ զսիրտ խամրեալ ծորմամբ ծաղկանցին առաջնոց
Եւ նորաբոյս գալարեաւ պըճնաղարդէ զունայն ծոց։

Զ

Այս մանկութեան մերոյ, այս եւ ծերութեանս ապաւէն՝
Մինչ առաջինն ի յուսոյ, միւսն յընկերաց ըզքանի.
Այս սըրտահար ըզդացումն ելից ծածկեաց բիւր քարտէն,
Նոյն եւ զաս ՚ըդեօք որ ընդ իմ՝ իսկ աչօքս արդ լընանի։
Այլ են ինչ իրք լուսաւորք ըստուգագոյն էութեամբ
Յաղթկուք երկրիս ցընորից, ի ձեւ ու ի գոյն բարեբեկ՝
Ինան մըտածին մերս երկինք յոյժ առաւել գեղեցիկ,
Եւ քան զնոյնչ աստղակոյտըն՝ զոր ճարտարըն Մուսայ
Դասաւորէ յամոյն տիեզերաց պղտոտայ։

VII

I saw or dream'd of such, — but let them go, —
They came like truth, and disappear'd like dreams;
And whatsoe'er they were — are now but so:
I could replace them if I would; still teems
My mind with many a form which aptly seems
Such as I sought for, and at moments found;
Let these too go — for waking Reason deems
Such over-weening phantasies unsound,
And other voices speak, and other sights surround.

VIII

I've taught me other tongues — and in strange eyes
Have made me not a stranger; to the mind
Which is itself, no changes bring surprise;
Nor is it harsh to make, nor hard to find
A country with — ay, or without mankind;
Yet was I born where men are proud to be,
Not without cause; and should I leave behind
The inviolate island of the sage and free,
And seek me out a home by a remoter sea.

IX

Perhaps I loved it well; and should I lay
My ashes in a soil which is not mine,
My spirit shall resume it — if we may
Unbodied choose a sanctuary. I twine
My hopes of being remember'd in my line
With my land's language: if too fond and far
These aspirations in their scope incline, —
If my fame should be, as my fortunes are,
Of hasty growth and blight, and dull Oblivion bar

Է

Տեսի աչօք կամ յանուրջս . . . այլ զի կայ իմ եւ նոցա.
Երեւեցան իբր ըստուգ, անհետացան իբր երազ.
Էին որ զինչ եւ էին, արդ այսպիսիք են ահա.
Եւ կարեմ այլս ընդ նոսին փոխանակել Հանապազ.
Զի պատկերօք լի է գլուխ իմ տակաւին այնպիսեօք՝
Զորոց հարեալ մերթ ըղձիւք եւ մերթ ըզբռամբ խակ ածի . . .
Այլ մոռասցուք եւ զոտս . քանզի առ բանն որ զարթչի՝
Անդէպ անճահ երեւին մրտացընորքն անդաճմունք .
Այլ ձայնք խօսին այժմ եւ այլք յածին զինեւ երեւմունք :

Ը

Արդ ընդելալ իմ ի լուր այլաձօսիկըն լեզուաց
Օտարական չեմ ես յայսմ հետէ առ աչս օտարին .
Միտք անյողդողդք ոչ ապշին ի փոփոխել պատկերաց .
Ոչ դըժուարին ինչ է գիւտ ոչ ըստեղծուած դըժուարին
Բազմամարդիկ ըզտանել կամ անմարդի հայրենիս .
Սակայն ծընեալ եմ յերկրի՝ ուր ծընանել փառք գըրի .
Եւ յիրաւունս իսկ . արդ իմ Թողից լըքից ըզկղզի
Ուր անկասկած իմաստունն եւ այր ազատ յօրանայն ,
Եւ խընդրեցից տուն յաչխարհ հեռի ու ի ծով բացական :

Թ

Այլ գուցե քաջ սիրելով սիրեցի ես զայն տեղիս
Եւ արդ յօտար աշխարհի կայցէ Թողուլ զիմ Ներչաւ .
Սակայն առ նմին վերըստին Թող արասցէ դարձ հոգիս ,
(Թէ հոգի զերծ ի հողոյն կարէ ընտրել իւր տաճար) :
Այլ ես ըզայս՝ անմոռաց կալայ ի յուշ ազգակցաց՝
Խառնեալ զոհեմ ընդ բարբառ. որով վարին հայրենիք .
Բայց Թէ յանճուկ տարի վարեն զիս անդրադոյնս խղճք անոտիք ,
Թէ զոգ բաղդիս և համբաւս աճեալ փոյթ՝ փոյթ և խամրի ,
Թէ յանընշոյլ դերեցօյց մոռացութեան խաւարի ,

X

My name from out the temple where the dead
Are honour'd by the nations — let it be —
And light the laurels on a loftier head!
And be the Spartan's epitaph on me —
« Sparta hath many a worthier son than he ».
Meantime I seek no sympathies, nor need;
The thorns which I have reap'd are of the tree
I planted, — they have torn me, — and I bleed:
I should have known what fruit would spring from such a seed.

XI

The spouseless Adriatic mourns her lord;
And, annual marriage now no more renew'd,
The Bucentaur lies rotting unrestored,
Neglected garment of her widowhood!
St. Mark yet sees his lion where he stood,
. . . . . .
Over the proud Place where an Emperor sued,
And monarchs gazed and envied in the hour
When Venice was a queen with an unequall'd dower.

XII

The Suabian sued, and now the Austrian reigns —
. . . . . .
Kingdoms are shrunk to provinces, and chains
Clank over sceptred cities; nations melt
From power's high pinnacle, when they have felt
The sunshine for a while, and downward go
Like lauwine loosen'd from the mountain's belt:
Oh for one hour of blind old Dandolo!
Th'octogenarian chief, Byzantium's conquering foe.

Ժ

Եւ թէ զանուանս իմ հերքեն ի տաճարէն այն ի լաց
Ուր պատուեն աղջիք եւ ազինք ըզմեռելոց յիշատակ, . . .
Ինչ . . . եւ թող դամին պակ դիցի վերից ճակատաց.
Արձանագիր ըսպարտեան չատ լիցի յիմ տապանակ.
Թէ՝ « Պարտայ են են որդիք արժանաւորք քան ըզսա [8] »:
Զեմ հետամուտ համակիր սիրոյ այլոց ու ոչ կարօտ.
Իմ ձեռատունկ ծառոյս տուրք է ինձ փըչոցս այս նարօտ.
Ի նոցանէն խոցոտեալ ահա կամեմ ես զարիւնս.
Ո՞չ յարկանել անդ ըզսերմն՝ եր պարտ յիշել եւ գարդիւնս:

ԺԱ

Այրիացեալն Ադրիա լալով արդ լայ զամուսին [9].
Ո՛չ եւս ամաց յամս հանդէսք իւր կատարին հարսանեաց,
Եւ եղնացլիկ ճըճեկեր անկեալ դընի յամային,
Իբրեւ անպէտս պաճուճանք այրիութեան եթեսաց:
Այլ դիտէ ցարդ Սուրբ Մարկոս զառիւծն ուր կայրն իսկ յա-
. . . . . [ւաջ.
Ի հրապարակ անդր՝ ուր գայր ինքնակալ յաւետ ողբոյ [10],
Ուր եւ արքայք պըշնուին ընդ վէնետիկ ի նախանձ,
Ցորժամ բազէքըն գըշխոյ պըճնեալ ի պատդ մեծագանձ:

ԺԲ

Սուաբեանն [11] եբբեւն աղբերք. արդ իշխէ տէրն Աբեզան
. . . . . .
Աբքայութիւնք խոնարհեալք կային ի մարդս անընչան,
Գաղաքանի վարչակիր չըղթայակապ ի կաշկանդ.
Չալեալ աղանց ի կատարս անդ զօրութեանց վերնածայր
Այն ինչ ազդեալք յարեւուն ճառագայթից փառապանծ,
Ու ահա գլորին իբրեւ ձեան հրոտակք ընդ կուշտըս լերանց:
Ո՛հ, ո՞զմի տայր ժամ եւեթ ըզՏանտոլոյ [12] զաչացուրն
Ջուխթաբնամեայ գոռ վարչի և Բիւզանդեայ յաղթողին:

XIII

Before St. Mark still glow his steeds of brass,
Their gilded collars glittering in the sun;
But is not Doria's menace come to pass?
Are they not *bridled?* — Venice, ...
. . . . . .
Sinks, like a sea-weed, into whence she rose!
. . . . . .

XIV

In youth she was all glory, — a new Tyre, —
Her very by-word sprung from victory,
The « Planter of the Lion », which through fire
And blood she bore o'er subject earth and sea;
Though making many slaves, herself still free,
And Europe's bulwark 'gainst the Ottomite;
Witness Troy's rival, Candia! Vouch it, ye
Immortal waves that saw Lepanto's fight!
For ye are names no time nor tyranny can blight.

XV

Statues of glass — all shiver'd — the long file
Of her dead Doges are declined to dust;
But where they dwelt, the vast and sumptuous pile
Bespeaks the pageant of their splendid trust;
. . . . . .

ԺԳ

Ի պատըշգամբ Մարկոսեան ձիք իւր շղան պըզընծիք [15],
Աբեգնափառ փայլակեալ յոսկեսարեան մանեկաց.
Ահա ոչ Դորեայ ապառնալիք ի գլուխ ելին աւադիկ [14].
Եւ ձիքն ահա սանձեցան։ — Վէնետիկ . . . .
. . . . . .
Անկաւ զինչ խոտ ծովափին յորմէ 'նձիւղեալ եւ կանդներ.
. . . . . .

ԺԴ

Ի մանկութեան յօրացեալ փառազգեաց նոր ոճն էր Տիւբ
Զ 'առ առակէ զբոյց իսկ զիւր ետուն նըմա յաղթանակք,
Զ 'Ադիւծատունկն այն անուն [15]. քանզի 'նդ արիւն եւ ընդ հուր
Աճցեալ կանգներ առիւծունս յերկիր ու ի ծով վըտարակ.
Գերի վարեալ ըզգազում՝ ինքըն կելով միշտ ազատ։
Եւ Օսմանիկ բըռնութեան դէմ կայր պատուար Եւրոպայ.
Ցերաշխ ինձ կաս դու կրետէ՝ հակառակորդ Տրովադայ,
Անմահ ալիք դուք վըկայք նաւամարտին ի Լեպանդ.
Ոչ ժամանակ մաշէ ոչ բըռունք զանուանքդ անվըկանդ։

ԺԵ

Որպէս անդրիք բիւրեղեայք՝ դըբսից նորին լազմաշար
Հարեալ պատկերքն ի փըշուր որպէս փոշի հոսեցան.
Ահա ընակարան իսկ նոցուն ալաւարդն պերճ լայնատարը
Մեծաքարող հըռչակէ զպատպակ փառացն աննըման.
. . . . . .

XVI

When Athen 's armies fell at Syracuse,
And fetter 'd thousands bore the yoke of war,
Redemption rose up in the Attic Muse,
Her voice their only ransom from afar:
See! as they chant the tragic hymn, the car
Of the o 'ermaster 'd victor stops, the reins
Fall from his hands — his idle scimitar
Starts from its belt — he rends his captive's chains,
And bids him thank the bard for freedom and his strains.

XVII

Thus, Venice, if no stronger claim were thine,
Were all thy proud historic deeds forgot,
Thy choral memory of the Bard divine,
Thy love of Tasso, should have cut the knot
. . . . . .

XVIII

I loved her from my boyhood — she to me
Was as a fairy city of the heart,
Rising like water-columns from the sea.
Of joy the sojourn, and of wealth the mart;
And Otway, Radcliffe, Schiller, Shakspeare 's art,
Had stamp 'd her image in me, and even so,
Although I found her thus, we did not part,
Perchance even dearer in her day of woe,
Than when she was a boast, a marvel, and a show.

ԺԶ

Մինչդեռ բանակն Աթենայ ի Սիրակուս վատթարեր [16]
Եւ աքը հըղօքը մատնէին ի տըբրկութեան լուծ պահասատ,
Ատիկաստանըն Մուսա ըզփըրկութիւն հըռչակեր
Եւ գերեթափ առնէին նըւագքն հնչելք ի քաղցուստ.
Այն ինչ նոքա գեռ զողջոյն յերիւրէին եղանակ,
Տեսէք, զիարդ յաղթօղին կառք ընկալաճեալք եւ կառեան
Սանձըն սահէր ի ձեռաց, զուր մերկանայր սուր զպատեան.
Տայր ըւածանել ըզշքղթայն, եւ արձակեալ ըզգերին
Ազատութեանդ, ասէր, դէք շուք եւ երգոց քերթողին:

ԺԷ

Այսպէս եւ քեզ, վէնետիկ, եթէ չէին իսկ այլ վտառք,
Թէ զպանծալիդ արարոց վէպ մոռացօնք ունէին,
Այլ վերհալն գուանի մըշտանըւագքն ի քէն պարզ
Սէր Դասսոյիդ՝ էր արժան խըզել ըզկապն հանգուցեին
. . . . . .

ԺԸ

Ի մանկականս ի տիոց ես սիրեցի զվէնետիկ
Եղէւ ինձ նա ի քաղաց քաղաք, սըրտի դաստակերտ,
Իբր ի վերայ ջրեղինաց սեանց ի ծովէ ամբարձիկ,
Բընակարան հրճուանաց, վաճառանոց ընչաւէտ:
Օդուէյ, Ռէտգլիֆ եւ Շիլլեր եւ Շէքսպեր հանճարեղք [17]
Տըպագուցեալ՝ ունէին յիս ըզնորին կերպարան.
Ոչ անհաճոյ եւ յայժմուս ինձ կայ յանշուքըս պայման.
Հաճոյագոյն իակ արդեօք արդ ի վըշտացն իւր աւուրս
Քան մինչ պանծայր հրաշագեղ անմահըտիղ յընդհանուրս:

XIX

I can repeople with the past — and of
The present there is still for eye and thought,
And meditation chasten'd down, enough;
And more, it may be, than I hoped or sought;
And of the happiest moments which were wrought
Within the web of my existence, some
From thee, fair Venice! have their colours caught:
There are some feelings Time cannot benumb,
Nor Torture shake, or mine would now be cold and dumb.

XX

But from their nature will the tannen grow
Loftiest on loftiest and least shelter'd rocks,
Rooted in barrenness, where nought below
Of soil supports them 'gainst the Alpine shocks
Of eddying storms; yet springs the trunk, and mocks
The howling tempest, till its height and frame
Are worthy of the mountains from whose blocks
Of bleak, gray granite into life it came,
And grew a giant tree; — the mind may grow the same.

XXI

Existence may be borne, and the deep root
Of life and sufferance make its firm abode
In bare and desolated bosoms: mute
The camel labours with the heaviest load,
And the wolf dies in silence, — not bestow'd
In vain should such example be; if they,
Things of ignoble or of savage mood,
Endure and shrink not, we of nobler clay
May temper it to bear, — it is but for a day.

ԺԹ

Ոչ յանհնարիցն ինչ է ինձ ըզնա խըռնել անցելովք.
Շատ իսկ առիթս ընծայէ աչաց՝ ուշոյ՝ եւ որ կանս,
Եւ ոչ սակաւըս գըտցեն խոշճոճս անդ միտք մեհաւորք
Նա եւ յոլովս իակ գուցե քան զիմ ըզոյսս եւ ըզընձանս:
Եղն են այո ի թըւոյ բարեբաստիկ ըոպէից
Որք ի յառէչըս կենաց իմոց անկան չարանիւթ,
Եւ որք ի քէն, վկնեաւիկ, առեալ ըերեն զիւրեանց հիւթ [18].
Են կիրք՝ զորս ոչ ժամանակք ջընջեն ոչ սաստ տանջանաց.
Ա՛ւ՝ եթէ ոչ՝ իմքս համայն լինէին ցուրտք ու անըզգաց:

Ի

Որպէս սիրեն բարձրադոյնք տոճեաց կանգնիլ ի բարձունս
Քարաժեռից ու ապառիկ անպատըսպար կոհակաց,
Աբմատ ձըգել յամուլ վայր, ուր ոչ նեցուկ առ հողմունս
Ոչ գունն հող դէմ լեռնակոյտ եւ պըտուտան փոթորկաց.
Այլ եւ այնպէս աճեն բունք արհամարհեալ ըզմրըրկաք,
Մինչեւ հասակք եւ իրանք լինին լերանցն այն արժան՝
Ցորոց ի սեաւ կամ ի գորշ յորձաքարուտ ի կըռան
Հակայաբար ջովացեալ եղեն մայրիք սիգաստար:
Ոչ անընդման սոցին միտք ընդարձակին ճոխաբար:

ԻԱ.

Գոյ հնար տեւել էութեան. գոյ հնար կենաց եւ վչտաց
Զըգել արմատըս խորինս ի սիրտ ամուլ եւ ունայն.
Ծանրաբեռնեալ գընայ ուղտ ըզճանապարհն անկառաչ.
Նա քանասար եւ անգամ՝ գայլ սատակի լըռելեայն.
Մի վայրապար արաջուք զօրինակօքս այս ապահաս [19].
Եթէ անարգ արարածք եւ փանաքի այդոքիկ
Կըրեն զաղէտըս ցաւոց ժուժեն եւ ոչ հանեն ճիկ,
Տարցուք եւ մեք մեր վըշտաց՝ հաստեալքս յընտիր ի կաւոյ.
Նա զի եւ կիրք վըտանգացըս՝ կիրք աւուր են միոյ:

XXII

All suffering doth destroy, or is destroy'd,
Even by the sufferer; and, in each event,
Ends: — Some, with hope replenish'd and rebuoy'd,
Return to whence they came — with like intent,
And weave their web again; some, bow'd and bent,
Wax gray and ghastly, withering ere their time,
And perish with the reed on which they leant;
Some seek devotion, toil, war, good or crime,
According as their souls were form'd to sink or climb.

XXIII

But ever and anon of griefs subdued
There comes a token like a scorpion 's sting,
Scarce seen, but with fresh bitterness imbued
And slight withal may be the things which bring
Back on the heart the weight which it would fling
Aside for ever: it may be a sound —
A tone of music — summer 's eve — or spring —
A flower — the wind — the ocean — which shall wound,
Striking the electric chain wherewith we are darkly bound;

XXIV

And how and why we know not, nor can trace
Home to its cloud this lightning of the mind,
But feel the shock renew'd, nor can efface
The blight and blackening which it leaves behind,
Which out of things familiar, undesign'd,
When least we deem of such, calls up to view
The spectres whom no exorcism can bind,
The cold — the changed — perchance the dead — anew,
The mourn'd, the loved, the lost — too many! — yet how few!

Իբ

Ամենայն կիրք կամ մաղձն կամ ի կրողացըն մաչին,
եւ թէպէտ այս թէպէտ այն՝ համայն առնուն կատարած.
են որք ուստի մեկնեցանն՝ յուսով դառնան կաթոգին,
եւ ըստ նախկին տարազու կըկին զոստայն նոյնամած.
եւ են որոց կորակոր խորշոմերես գիսախայտ,
վաղ վաղ ծնգեալք անկանին եղեգնեայ ցցոմն յերեարան.
Ոմանք կրօնից կան պատկառ եւ այլք զանձինս ի գործ տան,
կէսք պատերազմըն յուզեն եւ կէսք ըզչար համբուրեն
Իւրաքանչիւր ըստ հոգւոյ գնացիցն ի վեր կամ ստորին։

Իգ

Աւյլ ոչ է վիշտ նըւաճեալ որ ոչ թողցէ զիւր կըծիկ՝
Հանգոյն կարճի խայթուածոց՝ ըզհարուածոյն նըշանակ,
Ցար զայրանայ թէ եւ գոգ աչաց հազիւ տեսանիկ.
եւ ի փոքուէ պատճառէ կուտին զիւրեաւ ծանրահակ
Ադիմք ցաւոց զոր ճըգնէրն ի բաց թափել ի սըրտէն.
Զայն ըզկ կամ երգ դաշնակից, ցայգ ամարան կամ գարուն,
եւ մի ծաղիկ, դիպուն հողմիկ կամ Ովկիան շառաչուն՝
են բաւականք ի խըզտել զըսպիս վիրաց զոր առաք,
Ցընցել զչըղթայն եղկարեայ որով ուժգինս եմք վարակք։

Իդ

Ոչ զուատ գիտեմք ոչ զընդէր ըզմըտաւոր փայլակեան,
եւ ոչ սլանալ յամպն ի վեր՝ յորում ծածկեալ նայն զօղի.
Սակայն ըզդալ ըզդամբ քաջ իսկ հարուածոց նորոգմանն,
Անզօրք ըզսեաւն եղծուլ հերկ՝ զոր արկն ի մեզ գողուզի.
եւ ի զբաղման իսկ մերում՝ ընտանեկան զարապամունք
Ցանըզդասից մինչ բընաւ ուսուեք չըկայր ինչ խեթ մեր,
ի տես աճեն ուրուականս՝ երդմնեցուցչաց անընքեր,
Աւյլափոխեալս եւ ցըրոնիս, գուցէ զմեռեալս մեր սիրունս
Ըզկորուսեալս եւ լացեալս, զի քաղցմն թէ եւ նուազունս։

XXV

But my soul wanders; I demand it back
To meditate amongst decay, and stand
A ruin amidst ruins; there to track
Fall'n states and buried greatness, o'er a land
Which *was* tho mightiest in its old command,
And *is* the loveliest, and must ever be
The master-mould of Nature's heavenly hand,
Wherein were cast the heroic and the free,
The beautiful, the brave — the lords of earth and sea,

XXVI

The commonwealth of kings, the men of Rome!
And even since, and now, fair Italy!
Thou art the garden of the world, the home
Of all Art yields, and Nature can decree;
Even in thy desert, what is like to thee?
Thy very weeds are beautiful, thy waste
More rich than other climes' fertility;
Thy wreck a glory, and thy ruin graced
With an immaculate charm which cannot be defaced.

XXVII

The moon is up, and yet it is not night —
Sunset divides the sky with her — a sea
Of glory streams along the Alpine height
Of blue Friuli's mountains; Heaven is free
From clouds, but of all colours seems to be
Melted to one vast Iris of the West,
Where the Day joins the past Eternity;
While, on the other hand, meek Dian's crest
Floats through the azure air — an island of the blest!

Իե

Այլ ընդ վայր միաք իմ յածին. ժամ է դառնալ ինձ ի փուլս.
Յաւերակաց մէջ կանգնիլ իւր աւերակ կենդանի.
Յարուցանել պետութիւնըս կործանեալս եւ խարխուլս
Եւ մեծութիւնըս թաղեալս ի ծոց երկրին անուանի՝
Որ մեծ եղեւ քան զՀամայն յիշատութեան անդ իւրում,
Զօքնաղագոյն է եւ ցարդ եւ հանապազ եղեցի.
Վէհօրինակ գաղափար, կերտուած բնութեան երկնածղի,
Որ դիւցազունս անդանօր ու ազատասուն կառոյց արս,
Աքուորագոյնս, գեղաւորս, ծովու ու երկրիս իշխող տէարս։

Իզ

Ո՛վ արքայից հրապարակ՝ ընկերահաչտ արք Հռովմայ.
Ո՛վ դու յանցեալն եւ յայժմուս իտալիա նազելի,
Ո՛վ վայելուչ դու պարտեզ տիեզերաց շուրջակայ,
Հանդէս հանուրց արուեստից, գեղոյ բնութեան հայելի.
Ցամայութեան իսկ քում՝ ով իցէ բնաւ քեզ հաւասար.
Գեղեցկագեղք են համայն վայրենագոյն իսկ քո տունկք.
Ծաղկին երեգքըդ խոպանք քան թէ գաւառք բարեբունք.
Դու եւ յանկման անդ քոյին վերերեւիս քաջափառ,
Եւ յաւերակքըդ խանգար շղթան շինորհ՛ք անըսպառ։

Իէ

Յառնէ լուսին, եւ գեռ ոչ է գիշերոյ երեւոյթ.
Այլ բաժանի 'նդ խնարհեալ արեգական նա զերկին.
Ծով լուսափառ ծաւալի 'նդ Փրիուլեայ բլուրըս կապոյտ [20].
Սուրբ են երկինք ի յամպոց. այլ ծիածան երփն յերփին
Համակ գունօք անկանի զարեւմտեան բովանդակ՝
Ուր շաղկապի հետասպոյզ տիւ ընդ անցեալն ամանակ.
Մինչդեռ ի յայնմ կուսէ զկարակնաձեւըն մահեակ
Ընդ մըկանունս եթերաց ալեաց վարէ Աստհիտ
Ջերանոթեան պարզելով ըզկըղզեակ քաջ Ճըշգըրիտ.

XXVIII

A single star is at her side, and reigns
With her o'er half the lovely heaven; but still
Yon sunny sea heaves brightly, and remains
Roll'd o'er the peak of the far Rhætian hill,
As Day and Night contending were, untill
Nature reclaim'd her order: — gently flows
The deep-dyed Brenta, where their hues instil
The odorous purple of a new-born rose,
Which streams upon her stream, and glass'd within it glows,

XXIX

Fill'd with the face of heaven, which, from afar,
Comes down upon the waters; all its hues,
From the rich sunset to the rising star,
Their magical variety diffuse:
And now they change; a paler shadow strews
Its mantle o'er the mountains; parting day
Dies like the dolphin, whom each pang imbues
With a new colour as it gasps away,
The last still loveliest, till — 'tis gone — and all is gray.

XXX

There is a tomb in Arqua; — rear'd in air,
Pillar'd in their sarcophagus, repose
The bones of Laura's lover: here repair
Many familiar with his well-sung woes,
The pilgrims of his genius. He arose
To raise a language, and his land reclaim
From the dull yoke of her barbaric foes:
Watering the tree which bears his lady's name
With his melodious tears, he gave himself to fame.

Իզ

Մի միայն աստղ նազելալ հետոց նորին ուղեկից
Թագաւորէ ի վերայ կիսոյ երկնի սիրայնոյ.
Այլ առ տակաւ տակաւ լոյս ծովանըման ճաճանչից [21]
Տարածանի զհեռաւոյր Հռետեան բարձամբ հանդիպոյ.
Տիւ եւ գիշեր անտանօր թըւին ի վորձ գտեկռիւ,
Մինչեւ բնութիւն տայ հրաման հանապազօր օրինին.
Խաղայ ալեօք հեզասահ Մեդոական գետ խորին [22]
Ծիրանածայր մըկանամբ գեռափըթիթ վարդից պէս
Հոսեցելոց ի հոսանս եւ ծընեալոց տեսս ի տես,

Իթ

Զազդիազդին ըզգեցեալ եթերական երեւոյթ՝
Որ ի հեռուստ խոնարհեալ յերեսըս ջուրց հարկանի,
Ցարեւմըտին ճոխ ցոլմանց մինչեւ յաստեղն փայլըմթ
Անդ նըկարին ամենայն գիւթիանըշմար գոյնք երկնի:
Այլ արդ փոխի տեսարան, եւ նըւագկոտ հովանի
Պարաքօղէ զլեռնաստանն. տիւ վերջոնեալ ի մայր իւր
Մեռանի զտիպ գըլուխն, որ գոյնս առնու հիւռ ի հիւռ.
Աւ ամէն ցունց օրհասին, յորըս չը քնաղ՝ հուսկն է գոյն.
Մինչեւ անցեալ եւ նորուն՝ տիրեսցէ լոկ գորշըն մոյն:

Լ

Տապան շիրմի է յԱրկուա մահարձանեալ սիւնաբարձ [23]
Ըզլաւրային հոմանւոյ ամբարելով զոսկրոտի.
Անդըր դիմեն ապաստան՝ որոց եղերք նըւագաց
Ձարտար երգոցն եւ հանճար բանաստեղծին է 'ղձալի:
Յայըղեցաւ նա կանգնել զիտալականըն բարբառ,
Եւ ի խըժիցն ոտիկաց ծանրադանդաղըն լըծոյ
Ըզհայրենիս իւր թափել. եւ յարտասուաց կաթուածոյ
Ոտգելով ըզդափնիդ ծառ սիրուհւոյն համանուն
Անմահական եւ անձին վերաստացաւ պերճ անուն:

XXXI

They keep his dust in Arqua, where he died;
The mountain-village where his latter days
Went down the vale of years; and 'tis their pride —
An honest pride — and let it be their praise,
To offer to the passing stranger 's gaze
His mansion and his sepulchre; both plain
And venerably simple, such as raise
A feeling more accordant with his strain
Than if a pyramid form 'd his monumental fane.

XXXII

And the soft quiet hamlet where he dwelt
Is one of that complexion which seems made
For those who their mortality have felt,
And sought a refuge from their hopes decay 'd
In the deep umbrage of a green hill 's shade,
Which shows a distant prospect far away
Of busy cities, now in vain display 'd,
For they can lure no further; and the ray
Of a bright sun can make sufficient holiday.

XXXIII

Developing the mountains, leaves, and flowers,
And shining in the brawling brook, where-by,
Clear as its current, glide the sauntering hours
With a calm languor, which, though to the eye
Idlesse it seem, hath its morality.
If from society we learn to live,
'Tis solitude should teach us how to die;
If hath no flatterers; vanity can give
No hollow aid; alone — man with his God must strive:

ԼԱ.

Նշխարք նորուն խաղաղեալ կան ուր մեռաւն ՅԱրկուաւոն,
ի լեռնավայրն յայն ի գեղջ, ուր ի վայրէջս կենաց
Անցոյց զաւուրսըն վերջինս. արդ չինակամք բարձրայօն,
եւ ոչ ընդ վայր բարձրայօն՝ կամ՝ գուրկք յիրաւ պարծանաց,
փուռեան առնել մանանիւք տաբաշխարհիկ խուզարկուաց
Ըզընակուեան քերթողին վայր եւ շիրմին ըզտապան.
Երկաքանչիւր պարզք եւ վճիռք, երկաքանչիւր դէպ պատկան
Յեղանակի եւ ոճոյ քերդողականն այն քնարի,
Ջան զհոյակապ մահարձան յուբանաձեւ տաճարի:

ԼԲ

Խաղաղաւէտ եւ ախորժ բընակուեանն հանդերձեան
Մի արդարեւ յայնցանէ՝ որ գան ի ճահ այնոցիկ՝
Որոց առեալ քաջ ի միտ ըզմահացուս այս պայման
Եւ վճէպ եւ ելեալք ի յուսոյ ակընկալեաց խաբուսիկ,
Ջըստուերամած հովանիս բըլրոց խնդրեն ապաւէն,
Ուստի տեսիլ բացակայ գոյեցե ի տես ի հեռուստ
Գաղաքանուոյ բազմազբաղ՝ զոր պըճնելոյ քաջ հարուստ.
Գանգղ ոչ եւս զօշոտե զաչըս՝ խըտիղ պաղպաջուն.
Ի խրախուճիւն՝ շատ է անդ պայծառ ճաճանչ արեւուն,

ԼԳ

Որ ըզլերինս յանդիման ածէ, ծաղկունս եւ սաղարթ,
եւ շողշողեալ հարկանի 'քաղցրակարկաջըն վըտակ,
Մինչ վայրապար ժամուց ծիրք՝ ալեաց հանդոյն չինչ զըւարթ
Սահին հանդարտ նըւաղմամբ՝ ազդեալ խմաստ արդարակ,
Թէպէտ եւ յոյլք թըւխցին հարեւանցի տեսողաց.
Ընկերութիւն թէ զկեղտն ուսուցանէ աղագ մեզ,
Ցառանձնութեան ուսանիմք՝ զերթեալ ի մահուն ասպարէզ.
Ուր շողքորթ՝ անդ, եւ ոչ ունայնութեան սին ծաղն.
Ընդ Աստուծոյ լոկոյ մարդ ճըգնի միայն ընդ միայն.

XXXIV

Or, it may be, with demons, who impair
The strength of better thoughts, and seek their prey
In melancholy bosoms, such as were
Of moody texture from their earliest day,
And loved to dwell in darkness and dismay,
Deeming themselves predestined to a doom
Which is not of the pangs that pass away;
Making the sun like blood, the earth a tomb,
The tomb a hell, and hell itself a murkier gloom.

XXXV

Ferrara! in thy wide and grass-grown streets,
Whose symmetry was not for solitude,
There seems as' twere a curse upon the seats
Of former sovereigns, and the antique brood
Of Este, which for many an age made good
Its strength within thy walls, and was of yore
Patron of tyrant, as the changing mood
Of petty power impell 'd, of those who wore
The wreath which Dante 's brow alone had worn before.

XXXVI

And Tasso is their glory and their shame.
Hark to his strain! and then survey his cell!
And see how dearly earn 'd Torquato 's fame,
And where Alfonso bade his poet dwell:
The miserable despot could not quell
The insulted mind he sought to quench, and blend
With the surrounding maniacs, in the hell
Where he had plunged it. Glory without end
Scatter 'd the clouds away — and on that name attend

ԼԴ

Կամ ԹԷ ինքնին իսկ ընդ գետս, որոց բարձեալ լցկորով
Մըտածութեանց ամբոցաց՝ ի մաղձայղց անդաճմունս
Գերեալ վարեն ըզՀոգիս, որք ընդ ցընորս յար գալով
ի մանկութեան հասակէն՝ ձըգեցին կեանս անսրուներս,
Ախորժելով ի դանդիոն եւ յարհաւիրըս բնակել.
Եւ կարծելով անձնամատն այնպիսւոյ իմըն բաղդի՝
Որ ոչ հանգոյն անձկութեանց ժամանակաւ փարատի.
Որք փոխեցին զարեգակն յարիւն, զերկիր ի դամբան,
Զդամբան ի գժոխս, եւ զգըժոխս ի մըթագոյն եւս գընդան:

ԼԵ

Ո՛վ Փերարա, ի փողըցըս քո Նգարձակս ու ի խոպան [24],
Ոյց ուղղաձիգ չափ ազդէ զի չէր պարտ գոլ անապատ,
Թըւին անէնք տարածեալք յիշխանանիստըն կայան
Եաւետն տոհմի հինաւուրց՝ պերճացեալ երբեմն աստ.
Որ յօրանայր ամրացեալ ի պարըսպիդ՝ երկայն դար.
Եւ մերթ պաշտպան եղեալ մերթ բըռնաւորաց հաւասար,
Ըստ ադրելոյ յեղափոխ կըրից ի սիրտս տըկար,
Ձեռն արկանէր ի նոսա՝ որք կըրեցինն ըզպըսակ,
Այլ՝ զոր Տանդեայ Ճակատ ցոյն վայր էր կըրեալ միայնակ:

ԼԶ

Եւ Դասալոյ փառք է տոհմին այնմ իշխանաց, եւ պարսաւ.
Լուր միանգամ զերգ նորուն ու ի խուղն հայեաց ի տըխեղծ [25],
Եւ տես քանի ծանրադին Տորկուատեայ լեալ է համբաւ.
Եւ յոր սահմանս Ալփոնսոս զիւրըն վարեաց բանաստեղծ
Զըւառակն բըռնաւոր, ոչ կարեր ամնձ արկանել
Մըտացն ազատ՝ զոր ստեպր ու առնել ջանայր հեղձուցիկ.
Շրջապատեալ մըւեկան գընդաւ դիւաց-ըզգեցիկ
Իջուցանէր ի տանդարս. այլ հասին փառք անվախճան
Հալածեցին հերքեցին զոր լընովաւ մեգ դիպան:

XXXVII

The tears and praises of all time; while thine
Would rot in its oblivion — in the sink
Of worthless dust, which from thy boasted line
Is shaken into nothing; but the link
Thou formest in his fortunes bids us think
Of thy poor malice, naming thee with scorn —
Alfonso! how thy ducal pageants shrink
From thee! if in another station born,
Scarce fit to be the slave of him thou madest to mourn:

XXXVIII

Thou! form'd to eat, and be despised, and die,
Even as the beasts that perish, save that thou
Hadst a more splendid trough and wider sty:
He! with a glory round his furrow'd brow,
Which emanated then, and dazzles now,
In face of all his foes, the Cruscan quire,
And Boileau, whose rash envy could allow
No strain which shamed his country's creaking lyre,
That whetstone of the teeth — monotony in wire!

XXXIX

Peace to Torquato's injured shade! 'twas his
In life and death to be the mark where Wrong
Aim'd with her poison'd arrows, but to miss.
Oh, victor unsurpass'd in modern song!
Each year brings forth its millions; but how long
The tide of generations shall roll on,
And not the whole combined and countless throng
Compose a mind like thine? though all in one
Condensed their scatter'd rays, they would not form a sun.

ԼԷ

Զանուն նորա հռչակեն գարք յարտասուս եւ ի ճառ,
Մինչ քո անուն, Ալփոնսոս, ի մուռացօնըս մատներ
Եկեալ ընդ աղք պիղծ փուշոյ՝ զոր զարմ քոյին սընաւիատ
Ցունաշնութիւնըս ցընդէ, թէ ոչ երկաթեն անընըկեր
Ցոր պարանեալ պընդեցեր զերանութիւն քերդողին՝
Տայր մեզ ըզհեգ չարութիւնդ յիչել եւ զմեծ նախատինս:
Ո՛, իբր ի քէն դըքսական պաճոյճք անկեալ երեւինս.
Եթէ յայլում վիճակի քեզ ծընանել հասեալ էր՝
Մեծ էր ըստրուկ լինել այնըմ՝ զոր վըշտօք զբզուեցեր.

ԼԸ

Ա՛յ դու հաստեալ լըկ յուտել, ի կեալ անարգ եւ ի զուր
Ո՞ւ ի սատակիլ անբանից զոյգ, այսու լըկ գերազանց.
Զի՞ քո ախոռ ճոխափայլ եւ ընդարձակ քո մըսուր:
Նա զխորշոմեալ ճակատուն ածեալ պընակ լուսապանձ
Որ ծագէրն յայնժամ եւ այժմիկ ակնախըտիղ շողշողէ,
Ընդէմ հանուրըն ոսոխաց կայ, եւ կրուակեան կաճառու
Եւ զռանիանձ պուալըլ, որ զկընճեալ ոչ յանձն առնու
Թէ ձաղիցէ զՀայրենի կերկեր քընարն՝ երգ օտար,
Ջատաճնառուն զայն յետան եւ զհոմանային տողից շար:

ԼԹ

Նախատակոծ Տօրկուատեայ խաղաղութիւն արդ ուրուեաց.
Ջոր եւ կենօք եւ մահու թիրախ կարգեալ քէն ժըխոր
Դեղեալ փըքենօք նետաձիգ եղեւ յաճախ՝ եւ վըիպեաց:
Ո՛վ դու հանուրց յաղթական երգահանից գարուց նոր.
Բիւրք բիւրուց գան ամ յամէ, այլ ոըքան ծով մարդկութեան
Վերընթացացի եւ զինչի, եւ ի խըռան անդ ազգաց
Համօրէն ոչ գացեն միաք մի հաւատարք քոց մըտաց.
Գումարելով ճառագայթք թէ գումարին ամէն ցիր
Ոչ բաւիցեն արեգակըն մի գործել լուսաճիր:

XL

Great as thou art, yet parallel'd by those,
Thy countrymen, before thee born to shine,
The Bards of Hell and Chivalry: first rose
The Tuscan father's comedy divine;
Then, not unequal to the Florentine,
The southern Scott, the minstrell who call'd forth
A new creation with his magic line,
And, like the Ariosto of the North,
Sang ladye-love and war, romance and knightly worth.

XLI

The lightning rent from Ariosto's bust
The iron crown of laurel's mimic'd leaves;
Nor was the ominous element unjust,
For the true laurel-wreath which Glory weaves
Is of the tree no bolt of thunder cleaves,
And the false semblance but disgraced his brow;
Yet still, if fondly Superstition grieves,
Know, that the lightning sanctifies below
Whate'er it strikes; — yon head is doubly sacred now.

XLII

Italia! oh Italia! thou who hast
The fatal gift of beauty, which became
A funeral dower of present woes and past,
On thy sweet brow is sorrow plough'd by shame,
And annals graved in characters of flame.
Oh, God! that thou wert in thy nakedness
Less lovely or more powerful, and couldst claim
Thy right, and awe the robbers back, who press
To shed thy blood, and drink the tears of thy distress;

Խ

Ա՛յլ Թէպէտ մեծ իցես գու , սակայն են քեզ զուգական
Երիցագոյնք ծընընդեամբ՝ հայրենակիցք անուանիք ,
Դըժոխերգուն այն պըւէտ , եւ ասպետաց գովասան [27] .
Նախ Տուակեան հօր ձօնեցաւ Աստուածային խաղալիկ ,
Եւ ապա ոչ ինչ պակաս քան զՎաղկունին երեւէր
Հարաւայինն այն Ըսկոտ , զարմանալին պարերգակ ,
Որ արարած իմին Նորս հանէր տաղիւքըն դիւթակ ,
Եւ համազոյգ հիւսիսեանին Աբիսողոյ Նըւագաձայ
Ըզսէր կանանց եւ ըզմարտ , ցուցս եւ արարս ասպետաց :

ԽԱ

Կայծակնահար կապտեցաւ ՀԱբիսոսեայ կիսանդրին [28]
Տերեւակեղծ դափնիդեայ երկաթակուռըն պըսակ .
Ա՛յլ մի մեղանս դիցէ ոք տարերն այնմիկ չարաթոյն .
Քանզի զոր փառք հիւսէն՝ այն եււեթ է ստոյգ դափնի թագ՝
Բուսեալ ի ծառ անսասան եւ ի չանթից անվընաս .
Ըզկեղծադէմ սեթեւեթին հեգքեաց ընկէց այն ճակատ :
Ա՛յլ նանրախոհ եթէ 'Նդ այն ցաւիցեն միտք խանդակաթ՝
Գիտուն լիցին զի սըրբէ չանթ զոր հարու յերկրի ատտ .
Դըլուխ գորին աւադիկ է կըրկնակի բարեբաստ :

ԽԲ

Ո՛Հ իտալի իտալի , որում տըւան չարաչար [29]
Դեղեցկուհեանըն չընորհք եւ բօթաբերըն պըռոյտ
Վ ըշտացդ հանուրց անցեալոց եւ ներկայիցըս պատճառ .
Ա՛մէթ եւ ցաւք աբօրեն ըզճակատուդ դաշտ առդիդ .
Եւ տարեդիրք քո դրոշմեալք բոցեղինօք են տառիւք .
Իցէ թէ նուազ սիրունակ էին քո դէմք հոլանի ,
Կամ թ 'առաւել գոյր քեզ դժ խնդրել ըզվըէժ հայրենի ,
Դարձուցանել ահաբեկ ըզյարձակեալ հէնն ի քեզ
Ըզձարաւիս քում արեանդ եւ արտասուացդ աղէկեզ .

XLIII

Then might'st thou more appal; or, less desired,
Be homely and be peaceful, undeplored
For thy destructive charms; then, still untired,
Would not be seen the armed torrents pour'd
Down the deep Alps; nor would the hostile horde
Of many-nation'd spoilers from the Po
Quaff blood and water; nor the stranger's sword
Be thy sad weapon of defence, and so,
Victor or vanquish'd, thou the slave of friend or foe.

XLIV

Wandering in youth, I traced the path of him,
The Roman friend of Rome's least-mortal mind,
The friend of Tully: as my bark did skim
The bright blue waters with a fanning wind,
Came Megara before me, and behind
Ægina lay, Piræus on the right,
And Corinth on the left; I lay reclined
Along the prow, and saw all these unite
In ruin, even as he had seen the desolate sight;

XLV

For Time hath not rebuilt them, but uprear'd
Barbaric dwellings on their shatter'd site,
Which only make more mourn'd and more endear'd
The few last rays of their far-scatter'd light,
And the crush'd relics of their vanish'd might.
The Roman saw these tombs in his own age,
These sepulchres of cities, which excite
Sad wonder, and his yet surviving page
The moral lesson bears, drawn from such pilgrimage.

ԽԳ

Յայնժամ յաւէտ ահարկու կամ թէ նըւազ տարփելի
Նոտեալ հեզիկ ի քուժ տան վայելչիւր յանդորրու,
Եւ ոչ լայիր ըղձարեացդ առիթ ըղգեղ նազելի.
Ոչ եւս էր յայնժամ դիտել ընդ վախս Ալպեայց վայրիջու
Հեղեղազայր հրոս զինուց եւ խառն ի խուռն ազանց գրոհս,
Ապատակել եւ լափել յերիդանու ջուրս զարիւն.
Եւ ոչ պաշտօնան ցաւագին կայր քեզ սուսեր այլազգւոյն,
Որով թէպէտ եւ յաղթող թէպէտ յաղթեալ յօտարաց՝
Այսպէս ըստրուկ լինէիր բարեսիրաց կամ չարաց։

ԽԴ

Ի մանկութեանս յաճախս զհետս երթայի մըտերմին
Վերձագունի անմահիկ հռովմէական հանճարոյն [30],
Տուլէայ ասէմ մըտերմի. եւ ի հերձուլ իմ նաւին
Դաշչն հողմով ըզպայծառ ծովուն կապոյտ դաշտ սիրուն.
Ինձ Վեգաբա յառաջոյ ու ի թիկանց կայր Եդինէ.
ԸզՊիրէոնն ունէի յաչմէ, ձախմէ զԿորընթոս,
Եւ ընկողմեալ ի նաւուն ի խելս աչօք վայրագօս
Համանգամայն դիտէի զնոցուն սըփիւռ աւերակ,
Որպէս եւ նայն դիտեր յայնժամ ամայի նոյնդունակ։

ԽԵ

Ցանգի չէ եւս ըզնոսին վերակաւոյց ժամանակ.
Այլ տաղաւարք բարբարիկք ի դերբուկս անդ կանգնեցան
Ողբալիս եւս յարդարեալ եւ սըխրալիս հանգուռնակ
Ըզնըւազեալ Ճառագայթ լուսոյ նոցին ցիրեւցան
Եւ ընդընդայր ջախջախեալ հարբուտուխեանցն անցելոց։
Տեսանէր յայնժամ ուրեմն հռովմայեցին դերեզմանս
Դամբանարան քաղաքաց որ տըխրագին տան զարմանս.
Եւ արդ պատճէն խրատական ջըրոց նորին մընայուն
Վարդապետէ զոր ուսաւն ի տարաշխարհն անդ ի՝ չուն։

XLVI

That page is now before me, and on mine
His country's ruin added to the mass
Of perish'd states he mourn'd in their decline,
And I in desolation: all that *was*
Of then destruction *is*; and now, alas!
Rome — Rome imperial, bows her to the storm,
In the same dust and blackness, and we pass
The skeleton of her Titanic form,
Wrecks of another world, whose ashes still are warm.

XLVII

Yet, Italy! through every other land
Thy wrongs should ring, and shall, from side to side;
Mother of Arts! as once of arms; thy hand
Was then our guardian, and is still our guide;
Parent of our Religion! whom the wide
Nations have knelt to for the keys of heaven!
Europe, repentant of her parricide,
Shall yet redeem thee, and, all backward driven,
Roll the barbarian tide, and sue to be forgiven.

XLVIII

But Arno wins us to the fair white walls,
Where the Etrurian Athens claims and keeps
A softer feeling for her fairy halls.
Girt by her theatre of hills, she reaps
Her corn, and wine, and oil, and Plenty leaps
To laughing life, with her redundant horn.
Along the banks where smiling Arno sweeps
Was modern Luxury of Commerce born,
And buried Learning rose, redeem'd to a new morn.

ԽԶ

Մատեան նորա կայ 'առջի իմ, եւ յիմում մատենիս
Յաւելուն արդ աւերակք երկրի նորա յայնոսիկ՝
Զոր անշքեաւլս ողբայր նա, եւ ես ողբամ ամայիս.
Ա՛ռ հասարակ որպէս էր՝ կայ խանգարեալ աւադիկ.
Եւ Հառվմ ինքն իակ այժմիկ, հրամանահանն ինքըն Հառվմ,
Ա՛ւաղ ի նոյն ի մըրրկէ տասպատ դընի ուղնհար
Լինդ նոյն մաճեալ ընդ փոշի, ընդ նոյն մըռայլ եւ մըթար.
Եւ անցանեմք ընդ անկեալ տխտանակերպն ընդ կըմախ.
Նըշխարք այլոց աշխարհի, որոց դեռ չերմ է գազախ։

ԽԷ

Ա՛յլ տըխասանաք քոյին ոմ իտալիա, անվըկանդ
Ա՛ռ հասարակ ընդ երկիր բացե ի բաց հընչեսցին,
Ո՛վ արուեստից դու գայեակ, որպէս զինուց երբեմն անդ.
Յայնժամ պաշտպան մեզ եւ այժմ առաչնորդ ալ է քոյին։
Դու եւ կրծնից մերոց մայր, յորմէ՝ ազինք աշխարհաց
Ծրունըր կրկնեալ առաջի՝ ժըտին զէրկնից բանալիս։
Ի զեղջ եկեալ Եւրոպայ՝ ընդ մայրատեացն իւր ոճիրս
Յազատուեիւն հանցե զքեզ, ընկրկելով չետս անդրէն
Չալիս խուժիցն ամէհեաց, գոցե ներուժն առ ի քէն։

ԽԸ

Աւրդ ի սպիտակս անդր Աւնոս հրաւիրէ զմեզ պերճ յորմունս,
Ետրուրական ուր Աւթենք հռչակ հարեալ ծաւալեն [51]
Գիղաղիտակ դահլըճօքն՝ անդր ի սիրտ ըզդացմունս.
Թատերաձեւ չուրջ պատեալ բլրօք, յորոց ամբարեն
Ա՛ռատապէս ըզգործեան իւր, ըզգինեակ եւ ըզգէմ.
Սանք յղփուեիւն անդ կայթէ ամենեցկիւր ի՝ բըռնին։
Յափունս անդ ուր խաղք Աւնոյ ծիծաղագեղ դէպերին՝
Ծրնան այժմու վաճառուց եւ ճոխութեանց հեթեթանք,
Ո՛ւ ի՝նոր կենաց լոյս բացան մակացութեանց գերեզմանք։

XLIX

There, too, the Goddess loves in stone, and fills
The air around with beauty; we inhale
The ambrosial aspect, which, beheld, instils
Part of its immortality: the veil
Of heaven is half undrawn; within the pale
We stand, and in that form and face behold
What mind can make, when Nature's self would fail;
And to the fond idolaters of old
Envy the innate flash which such a soul could mould:

L

We gaze and turn away, and know not where,
Dazzled and drunk with beauty, till the heart
Reels with its fulness; there — for ever there —
Chain'd to the chariot of triumphal Art,
We stand as captives, and would not depart.
Away! — there need no words, nor terms precise,
The paltry jargon of the marble mart,
Where Pedantry gulls Folly — we have eyes:
Blood — pulse — and breast, confirm the Dardan Shepherd's prize.

LI

Appear'dst thou not to Paris in this guise
Or to more deeply blest Anchises? or,
In all thy perfect goddess-ship, when lies
Before thee thy own vanquish'd Lord of War?
And gazing in thy face as toward a star,
Laid on thy lap, his eyes to thee upturn,
Feeding on thy sweet cheek! while thy lips are
With lava kisses melting while they burn,
Shower'd on his eyelids, brow, and mouth, as from an urn!

Խթ

Ի անդանօր գիշանոյշ խանդաղակաթ ի վիմի [32]
Գեղեցկութեամբ խնկելով շուրջ զիւրեւ զօդս հասարակ,
Եւ տարփելոցն յանթառամ դիմացն ի տես արփենի
Անմահական լինքենէն ծորեալ բաշխէ օշարակ:
Կիսաբացիկ ընկրկի երկնաձեղունն առագաստ,
Կացեալ յակճիռս ի միջին՝ դիտեմք ի կերպն եւ գիմակ
Ըզգիւտ մարդոյս հանճարոյ՝ ուր չէր բնութիւն ինքն ատակ.
Եւ ընդ նախնի գիցպալտից խանդամբ վըսեմն ընդ եռանդ
Որ զայսգունակ ձուլեցին հոգեպատկեր հաստուածս անդ:

Ծ

Հայիմք յառիմք եւ դառնամք, ոչ գիտելով յո՞ւ շրջել.
Յարբեցութիւն ըմբռնեալք եւ ի խըտիղըս դեղոյ,
Մինչեւ սրտի պարտասեալ եւ դեղեւեալ դանդաչել.
Լըծեալք ընդ կառս յաղթական արուեստագէտն հանճարոյ
Իբրեւ ըսորուկք ինքնադատք կամք անդ, եւ կալ ցանկամք յար.
Օ՞ն անդր ի բաց սեթեւեթիք եւ հիւսք բանից կըռելոց,
Չէգ ատացուածք ի վաճառս հընչեալք կըճից կոփելոց.
Որովք պատրեն իմաստակք զամբոխ անմար. են մեր աչք,
Արիւն, ջարկ, կուրծք, հաւաստեն ըզդարդանեան հովուին
[վարկ [33]:

ԾԱ

Ո՞չ յայս գոյն ձեւ տարազոյ յայտնեցար դու առ Պարիս,
Եւ կամ առ նա ինքն յաւէտ բարերջանիկն Անքիսէս,
Կամ մինչ համակ փերւերտեալ յաստուածագեղդ ի սարիս
Նըւաճեցեր առ ոտամբդ ըզմարտից տէրն իսկ զԱրէս.
Որոյ յառեալ իբր յաստեղ լուսադիտակ ի քո դէմս,
Ի գուշս իջեալ անկաներ, ակն առ ի քէն անբըծիթիթ
Ձարակելով սիրատարփ յանուշակ գաշտ ծընօտիդ,
Մինչ ի շրթիանցդ ատրաչէկ աղբերացեալ հրակայլակ
Հոսեր համբոյր ի ճակատ, յօնս ու ի բերան բովանդակ:

LII

Glowing, and circumfused in speechless love,
Their full divinity inadequate
That feeling to express, or to improve,
The gods become as mortals, and man's fate
Has moments like their brightest; but the weight
Of earth recoils upon us; — let it go!
We can recal such visions, and create,
From what has been, or might be, things which grow
Into thy statue's form, and look like gods below.

LIII

I leave to learned fingers, and wise hands,
The artist and his ape, to teach and tell
How well his connoisseurship understands
The graceful bend, and the voluptuous swell:
Let these describe the undescribable:
I would not their vile breath should crisp the stream
Wherein that image shall for ever dwell;
The unruffled mirror of the loveliest dream
That ever left the sky on the deep soul to beam.

LIV

In Santa Croce's holy precincts lie
Laocoon's torture dignifying pain —
A father's love and mortal's agony
With an immortal's patience blending: — Vain
The struggle; vain, against the coiling strain
And gripe, and deepening of the dragon's grasp,
The old man's clench; the long envenom'd chain
Rivets the living links, — the enormous asp
Enforces pang on pang, and stifles gasp on gasp.

ՃԾԲ

Ոչ առ նորին ինչ՝ պյլ քո զգայականիդ թերութեան,
Որ առ սակաւ եւ սակաւ գերս ըմբռնէ զարտաքոյ,
Եւ չըքաւէն ի մեզ բանք ներքին զգացմանց գոլ թարգման.
Չանգոյն եւ յայս սքեսրալի ահեղաերոխտ չինուածոյ
Շլացեալ աչացս ըմբռնին ի խոր պատրանս պակուցման.
Մեծութիւնս այս մեծութեանց՝ խաղ առնէ զմեզ ըզփոքուքմբ,
Մինչեւ տակաւ ընդլայնեալ մըտացս՝ աճուէճ անդ առնուքմբ,
Ընդարձակեալ ըզհոգիս՝ քաջհասուք գոլ նոցին՝
Որոց լըկով զարմացմամբ կայաք յառաչէն ի զընին:

ՃԾԹ

Արձանացիր, եւ զդատ լեր, զի մեծ են շահք ի դիտմանդ
Քան զըսքանչանս վայրապար կամ զահ տեղւոյն սըրբութեան,
Կամ զհիացումն ընդ արուեստըն հնարագիւտ որ կայն անդ
Եւ ընդ ճարտարս՝ որք զհանուրց վերհն ամբարձին զայն կայեան,
Որում ստեղծուել ինչ զոյգ՝ ոչ բաւեաց ձեռն ոչ միտք նախնեաց,
Վըսեմութեան համբրէն կան աստէն խորք հոլանի.
Աստուստ կարեն միտք մարդոյ քակել հանել մի առ մի
Զոսկեղենիկ աւազոյն առնուլ ըզչափ եւ պայման
Եւ գիտել որքան զօրեն մեծամեծ դիւտք մըտական:

ՃԿ

Կամ գարձ այսի արարեալ ի վատիկան երիվիչիր
Զաղնըւակերպ տեսանել Լայոկոնեայ երաչեալ [86],
Ըզմահացուի օրահաս եւ ըզհօր սէր կարեկիր
Համբերութեան լըծակցեալ՝ որ անմահիցն է ի դէպ.
Զուր ճիգըն, զուր առ մանուած գարձ ի գարձին պատածոյ
Եւ առ պըրկանս կաշկանդման չարաժանի վիշապին՝
Մըրցանք ծերոյն. մահաճոյն երկայնաշար ըշղթային
Ըզկենդանին աղնաշար կարթեալ՝ եւ քարըն անարի
Մանրակըռիտ սատակէ քաղեալ ոգի առ ոգի:

CLXI

Or view the Lord of the unerring bow,
The God of life, and poesy, and light —
The Sun in human limbs array'd, and brow
All radiant from his triumph in the fight;
The shaft hath just been shot — the arrow bright
With an immortal's vengeance; in his eye
And nostril beautiful disdain, and might
And majesty, flash their full lightnings by
Developing in that one glance the Deity.

CLXII

But in his delicate form — a dream of Love,
Shaped by some solitary nymph, whose breast
Long'd for a deathless lover from above,
And madden'd in that vision — are exprest
All that ideal beauty ever bless'd
The mind with in its most unearthly mood,
When each conception was a heavenly guest —
A ray of immortality — and stood,
Starlike, around, until they gather'd to a god!

CLXIII

And if it be Prometheus stole from Heaven
The fire which we endure, it was repaid
By him to whom the energy was given
Which this poetic marble hath array'd
With an eternal glory — which, if made
By human hands, is not of human thought;
And Time himself hath hallow'd it, nor laid
One ringlet in the dust — nor hath it caught
A tinge of years, but breathes the flame with which 'twas wrought.

ՃԿԱ

Կամ ի զընին դու կայց տեառնըն դիպածիգ աղեղան [97],
Ա՛յն որ կենաց կոչի դիք եւ քերդուԹեան եւ լուսոյ.
Եւ մարդակերպ իրանամբք բերեալ ըզդէմս արեգան
Ցօնըս շարժէ փայլատփիւռս յաղԹահակաց ի շըքոյ.
Դեռ այն ինչ նեան ոստուցեալ յաղեղանէն արձակի,
Փայլէ փըքրին ցասմնալի անմահականըն վըհժուժ.
Շրջացանէն աչք եւ ունչք՝ դեղեցիկ խմբն զայրուց.
Եւ վհհուԹիւն կորովի փայլատակեալ բռավանդակ
Լոկովն յայտնէ անմարկեալ զաստուածուԹեան երեւակ։

ՃԿԲ

Ա՛յլ ի չըքնաղ կերպարանս անդ անուրջք իմն են սիրոյ
Կերպարանեալք ի տեսիլ յաւերժհարսին մենահիւս.
Աչմահուընակ տարփածուի տատակ ի սէր հարելոյ
Եւ յափշուԹեան անդ իւրում կացելոյ աչք ի յակճիռ,
Տըպաւորեալ ի նըմա զամենայն գեղ մըտածին
Զոր կարաց մարդ հանճարել յանեզրկրաւոր գազափար,
Ցերկինք ընորհէ ՚նդունելով ըզնորհըդոցըն տիպար,
ԶանմահուԹեան ճառագայԹս, որ իբրեւ բոլոր աստղակոյտ
Շուրջ հաւաքեալ կառուցին զաստուածեան զոյն երեւոյԹ։

ՃԿԳ

Թէ արդարեւ ՊառնիԹեւս ըզհուր յերկինց գողացաւ՝
Որով տածին մահացուք, հաւոյց ըզնոյն վերըստին
Նա՝ որ եղեւ ձեռընհաս հըզօր ոգւով այնքանեաւ
Քերդողականս յայս ի վէմ տըպաւորել գըլխովին
Զանմահակերպ փառաց շուք. զոր Թէ մարդոյ ձեռն հաստեաց
Ա՛յլ խորհուրդք գեր մարդկայինք անշուշտ ծընան գնորոյն ձեւս,
Ո՛ւմ ժամանակն իակ խնայեաց. չէք խոպ մ՚անկեալ յարձանէս,
Եւ ոչ ընդ մի եկեալ բիծ յոլովուԹեամբ ինչ տարեաց,
Ա՛յլ տակաւին շընչէ զոյց՝ զոր ի սկըզբանն անդ կըրեաց։

CLXIV

But where is he, the Pilgrim of my song,
The being who upheld it through the past?
Methinks he cometh late and tarries long.
He is no more — these breathings are his last;
His wanderings done, his visions ebbing fast,
And he himself as nothing: — if he was
Aught but a phantasy, and could be class'd
With forms which live and suffer — let that pass —
His shadow fades away into Destruction's mass,

CLXV

Which gathers shadow, substance, life, and all
That we inherit in its mortal shroud,
And spreads the dim and universal pall
Through which all things grow phantoms; and the cloud
Between us sinks and all which ever glow'd,
Till Glory's self is twilight, and displays
A melancholy halo scarce allow'd
To hover on the verge of darkness; rays
Sadder than saddest night, for they distract the gaze,

CLXVI

And send us prying into the abyss,
To gather what we shall be when the frame
Shall be resolved to something less than this
Its wretched essence; and to dream of fame,
And wipe the dust from off the idle name
We never more shall hear, — but never more,
Oh, happier thought! can we be made the same:
It is enough in sooth that *once* we bore
These fardels of the heart — the heart whose sweat was gore.

ՃԿԴ

Ա՛յլ ո՛ւր արդեօք իջե՞նա, Պանդուխտ իմոց նըւագաց,
Ո՞ւր այն՝ որ էր յանցելումն երգոց օճան զօրավէդ.
Թը՛ւ՝ ինձ թէ գայ նա յուշիկ եւ դանդաղեալ առնու զկաց, ..
Ոչ եւս է նա. ու ահա հուսկ ընծեղոյն շըշունջ սակաւիկ:
Դադարեցաւ Թափառիկն եւ վերացան տեսիլք իւր.
Եւ եղե՛ւ նա ինքն ոչ ինչ: — Թէ առաւել քան ըզցնորս
Իչր ինչ Ն՛արդեօք, Թէ կարէր խառնիլ ի շարս ձեւաւորս
Նոցին՝ որք կեանն եւ կըրեն, ապա եւ նա Թող անցցէ.
Ըսաուեր նորին ի կուտակս եղծմանն անկեալ պակասէ,

ՃԿԵ

Ա՛յն որ պատէն եւ զըստուերս եւ գոյութիւնս եւ ըզկեանս
Եւ զամենայն զոր ստանամբս՝ ի մահացուն իւր պատանս.
Որ սփռէ զմուխ եւ դանդիման ու առ հասարակ տըխատանս՝
Եւ զամենայն ինչ փոխէ յօրըուականաց կերպարանս.
Փարատի ամպն՝ որ ընդ մէջ մեր եւ բնաւին որ փայլեաց.
Փառաց ճաճանչն խակ՝ փոխեալ ի վերջալոյս համառօտ
Մելամաղձիկ խմբն փայլ սըփռէ նըւազ ընդ աղօտ
Ցեզըր մըրճան. Թըխագոյն ճաճանչք քան Թուխ ըզգիշեր,
Գանգի հարեալ ափշութեամբ եւ զօշտեալ զմիտս մեր,

ՃԿՋ

Վարեալ մըղեալ ի յանդունդս ի վայր ըզմեզ յուշարկէն
Չեռազօտել զայն՝ զոր կայ մընալ լինել մեզ տակաւ,
Ցորժամ՝ լուծցին կերպարանքս այս յիր՝ որ նուազ խակ իցէ՝
Գան զայժմուս հեգ գոյութիւն. եւ յերազել ըզհամբաւ,
Եւ Թօթափիլ ըզփոշի յունայնատուր անուանէ.
Ջոր ոչ եւս այլ լըւթիւք: Բայց ո՞չ եւս... խոկ երջանիկ.
Ոչ եւս լիցուք յայնմ՝ հետե որպիսի եմքս արդ այժմիկ:
Շատ է առաւել՝ զի զըբերտի կրեցաք երբեմն ըզգեստիս,
Սիրու՝ որ յարեան Ճապաղիս փոխեր զերկանցըն քըրտինս:

CLXVII

Hark! forth from the abyss a voice proceeds,
A long low distant murmur of dread sound,
Such as arises when a nation bleeds
With some deep and immedicable wound;
Through storm and darkness yawns the rending ground.
The gulf is thick with phantoms, but the chief
Seems royal still, though with her head discrown'd,
And pale, but lovely, with maternal grief
She clasps a babe, to whom her breast yields no relief.

CLXVIII

Scion of chiefs and monarchs, where art thou?
Fond hope of many nations, art thou dead?
Could not the grave forget thee, and lay low
Some less majestic, less beloved head?
In the sad midnight, while thy heart still bled,
The mother of a moment, o'er thy boy,
Death hush'd that pang for ever: with thee fled
The present happiness and promised joy
Which fill'd the imperial isles so full it seem'd to cloy.

CLXIX

Peasants bring forth in safety. — Can it be,
Oh thou that wert so happy, so adored!
Those who weep not for kings shall weep for thee,
And Freedom's heart, grown heavy, cease to hoard
Her many griefs for One; for she had pour'd
Her orisons for thee, and o'er thy head
Beheld her Iris. — Thou, too, lonely lord,
And desolate consort — vainly wert thou wed!
The husband of a year! the father of the dead!

ՃԿԷ

Լուռ..... աւադիկ յանդընդոց անտի լինի ձայն ժաման,
Երկար եւ խոր ի հեռուստ հընչեալ մրմունջ ահաւոր,
Որպէս ըզձայն զոր արկեալ ազգ հարեալ յախտ մահական
Որում չնչէ յոյս դեղոյ բըժըշկութեան հնարաւոր:
Ի ծուփ մրըրկի եւ միդի գետին դընչեալ պատառ.
Խուճն ի վըհէ թեւածեն թափառական ուրուականք.
Թէ եւ անթագ՝ պետ նոցին Թըւի Թագի դեռ ժառանգ.
Եւ գալհահար այլ սիրուն, խարչեալ աղեօք մայրենի
Գըգուէ ի գիրկ դիեցիկ՝ ում սընունդ ծոց իւր չ'ունի [88]:

ՃԿԸ

Ո՞ւր արդ իցես դու, պետաց եւ արքայից բարուենակ,
Ցոյս ցանկալի բազմութեան ազգաց, մեռա՛ր 'դեօք եւ դուն.
Չէր մարթ չիրմին մոռանալ ըզքեզ եւ քո փոխանակ
Կըքեր ըզգլուխ ոչ այդքան վհչ ոչ այդքան եւ սիրուն:
Ի տըխուր մէջ գիչերին, ով մայր միոյ լուկ ժամու
Մինչ արիւն դեռ կաթէր սիրտ քո ի վերայ որդւոյ քումի՝
Հաւեալ մահու ըզոեցոյց զամենայն ցաւդ ապառումի.
Փախեաւ ընդ քեզ ներկայս բաւատ եւ յուսացեալ խընդութիւնն
Որ ըզկըզիչն արքունիս լընոյր վեղոյր թաթաղուն.

ՃԿԹ

Գեղջուկք երկնեն անվըտանգ. իսկ առ իմ՞ ոչ քեզ այս,
Քեզ՝ ով բնաւից երջանիկ ու ամենեցուն սիրելի.
Լացցեն, լացցեն այո զքեզ ոըք ոչ կամին լալ զարըցաս.
Ազատութեան ինքըն սիրտ ՃընՃեալ բեռամբ ցաւալի
Ըզհոսկ վընշացըն Թողեալ՝ գորովէ զմեզ միայնակ.
Ա՜յն որ տեղայրն ըզքեզ շուրջ Ներքըողական գովքեց Ճառ.
Եւ Նըշմարեր ըզդըլխովդ ըզծիածան իւր պայծառ:
Եւ դու մեկնակ տեր, ըզքեզ եալ լըծակից, զուր դու փեսայ,
Մի եւեթ ամ ամուսին, հայր մեռելոց յաւակայ:

CLXX

Of sackcloth was thy wedding garment made;
Thy bridal's fruit is ashes: in the dust
The fair-hair'd Daughter of the Isles is laid,
The love of millions! How we did intrust
Futurity to her! and, though it must
Darken above our bones, yet fondly deem'd
Our children should obey her child, and bless'd
Her and her hoped-for seed, whose promise seem'd
Like stars to shepherds' eyes: — 'twas but a meteor beam'd.

CLXXI

Woe unto us, not her; for she sleeps well:
The fickle reek of popular breath, the tongue
Of hollow counsel, the false oracle,
Which from the birth of monarchy hath rung
Its knell in princely ears, 'till the o'erstung
Nations have arm'd in madness, the strange fate
Which tumbles mightiest sovereigns, and hath flung
Against their blind omnipotence a weight
Within the opposing scale, which crushes soon or late, —

CLXXII

These might have been her destiny; but no,
Our hearts deny it: and so young, so fair,
Good without effort, great without a foe;
But now a bride and mother — and now *there!*
How many ties did that stern moment tear!
From thy Sire's to his humblest subject's breast
Is link'd the electric chain of that despair,
Whose shock was as an earthquake's, and opprest
The land which loved thee so that none could love thee best.

ՃՀ

Ջո հարանեաց պատմուճանք անկան հիւսիւք խարազանց.
Առագաստին քո բողբոջ պտղաբերեաց քեզ աճիւն.
Անկեալ եղաւ ի փոչի կըղզեաց դըստրիկն հերապանճ
Սիրեցեալն այն ի բիւրուց, յոյս ապագայ մեր բարւոյն.
Ջի թէ մահուան իակ մըթնար զսակերոտի մեր պատեր,
Ահա ափսեաք՝ թէ որդեաք՝ որդւոյ նորա հնազանդին,
Օրհնեն ըզմայրն եւ օրհնեն ըզշառաւիղն ըղձալին,
Որ ցանկալի մեզ թըւեր հանդոյն աստեղ յայլս հովուի. —
Ո՛ ահա դըստա՛ւ լուկ ճաճանչ լուսերեւոյթ՝ որ ցըրուի:

ՃՀԱ

Վա՛հ, եղուկ մեզ, ու ոչ նըմա, զի նա նըւնջէ խաղաղիկ: —
Վայրապատին յեղյեղուկ ծուխ ոսմականըն շընչոյ,
Լեզու պեղեալ խորհըրդոց, եւ կամ՝ պատգամք խաբուսիկ՝
Որ շընչնջէր՝ ի սկզբանց իշխանութեան աքքենւոյ
Ի լսելիս փարազանց, մինչեւ ընկճեալ ժողովուրդք
Յաբեան եւ խուռն ընթացան, զինուորութիւն խեղաթար. —
Բաղդ տարակարծ՝ որ զիշխողս հըզօրս առնէ ոտընհար,
Եւ արկանէ 'նդդեմ նոցին կոյր բըռնութեանն եւ անքոյթ
Մէտ մ՝ ի նըժարն հակակայ՝ որով ճընշին վաղ կամ փոյթ.

ՃՀԲ

Ահա յաղթիկ լինէին թերեւս նորա մանն եւ բաստ.
Ա՛յլ ո՛չ. չառնուն յանձին զայդ՝ սիրտք մեր. չը-քնաղ մանկա-
Բարի՝ գոլով անկեղծ, մե՛ծ՝ չունելով զոք դիմակաց. [մարդ,
Այն ինչ եղեալ հարան եւ մայր, եւ անդ անկեալ դընի արդ...
Գանի կապանս ոչ խըղեաց մին այն վայրկեան դըժընդակ.
Ի սըտոե հօր քում՝ ցըսիրտ յետին հընոյ հպատակին
Մածեաւ ըզղձալ յուսահատ ելեկտրացունդ տապնակին,
Որոյ դըղորդ խրեւ ժամ սասանեցոյց զերկիրն այն
Որ սիրէրն այնպէս ըզքեզ որպէս ոչ այլ ոք համայն:

CLXXIII

Lo, Nemi! navell'd in the woody hills
So far, that the uprooting wind which tears
The oak from his foundation, and which spills
The ocean o'er its boundary, and bears
Its foam against the skies, reluctant spares
The oval mirror of thy glassy lake;
And, calm as cherish'd hate, its surface wears
A deep cold settled aspect nought can shake,
All coil'd into itself and round, as sleeps the snake.

CLXXIV

And near Albano's scarce divided waves
Shine from a sister valley; — and afar
The Tiber winds, and the broad ocean laves
The Latian coast where sprang the Epic war,
« Arms and the Man », whose re-ascending star
Rose o'er an empire: — but beneath thy right
Tully reposed from Rome; — and where yon bar
Of girdling mountains intercepts the sight
The Sabine farm was till'd, the weary bard's delight.

CLXXV

But I forget. — My Pilgrim's shrine is won,
And he and I must part, — so let it be, —
His task and mine alike are nearly done;
Yet once more let us look upon the sea;
The midland ocean breaks on him and me,
And from the Alban Mount we now behold
Our friend of youth, that ocean, which when we
Beheld it last by Calpe's rock unfold
Those waves, we follow'd on till the dark Euxine roll'd,

ՃՀԳ

Ողջ լեր՝ Նեմի [89]. զի չբքնաղ ղօղեալ ի բլուրս պրակաշարժ,
Զի եւ յախուռնն մրըրիկ որ ըղկաղնի հինաւուրց
Աբմատախիլ արարեալ ոստուցանէ գետնաքարշ
Եւ ըստ ափունսըն վարէ զովկիանոս դիպեն ջուրց
Ցերկինս ի վեր պուռղելով ըղփրփրացեալ վէտս ալեաց,
Զըւաճեւիդ կայ պատկառ բիւրեղափայլ ըզճակիճ.
Հանդարտ զինչ քէն ողբեալ՝ երեսըն ի կերպ ցուցակի
Խոր եւ ցըտին մըկանանց. այն՝ զոր խռովէ եւ ոչինչ,
Ցեռեալ տոռնեալ զիրերօք համակ հանդոյն օձ ի ներկ։

ՃՀԴ

Եւ հուպ նըմին Ալբանոյ վըտակըն գայ յերեւան՝ [90]
Ի հարազատ իմն հաղիւ անջըրպետեալ ի հովտէ.
Ճեմի Տիբեր ի հեռուստ, ու անդրագոյն լայնն ովկիան
Փերելով զափըն լատին ուր դիւցազանցն ի մարտէ,
Ելին «զէնքն եւ պրն» այն՝ որոյ կաց աստղ կանգուն [91]
Եւ ամբարձաւ յինքնակալ ի պետութիւն։ — Խակ յայկոյս
Չանգըստարան վայրք Տուլեայ մինչ ի Հռովմայ տպրըն խոյս [92].
Եւ հեռագոյն ուր ըներանց պարք անկանին քօղ ական՝
Հերկք ու ագարակ Սաբինաց [93], խոնջ քերդողին զբօսարան։...

ՃՀԵ

Ասյ զառանցեմ. — Պանդխտին իմոյ առաւ սըրբարան.
Եւ հարկ է մեզ անջատել թողուլ զիրեար. — Եղեցի՛.
Վաստակ նորա եւ իմ՝ գոգ ի գլուխ ելին միաբան։
Ասյ միանգամ՝ եւս ի ծով անդր ակնարկել թողյ տացի։
Համատարած մէջերկրեայ խորտակի հուպ չիս եւ նա.
Եւ ի լեռնէ Ալբանոյ ըզմանկունքեան բարեկամ
Տեսանեմք մեք զովկեան, որ՝ մինչ տեսաքս հուսկ անգամ՝
Ըղքարաժեռ կալբէիս կուտեր կոհակ ի կոհակ [94],
Եւ սահ արկեալ դընացաք մինչ անդր՝ ուր թուխն Եւբսինեակ՝

CLXXVI

Upon the blue Symplegades: long years —
Long, though not very many, since have done
Their work on both; some suffering and some tears
Have left us nearly where we had begun:
Yet not in vain our mortal race hath run,
We have had our reward — and it is here;
That we can yet feel gladden'd by the sun,
And reap from earth, sea, joy almost as dear
As if there were no man to trouble what is clear.

CLXXVII

Oh! that the Desert were my dwelling-place,
With one fair Spirit for my minister,
That I might all forget the human race,
And, hating no one, love but only her!
Ye Elements! — in whose ennobling stir
I feel myself exalted — Can ye not
Accord me such a being? Do I err
In deeming such inhabit many a spot?
Though with them to converse can rarely be our lot.

CLXXVIII

There is pleasure in the pathless woods,
There is a rapture on the lonely shore,
There is society, where none intrudes,
By the deep Sea, and music in its roar:
I love not Man the less, but Nature more,
From these our interviews, in which I steal
From all I may be, or have been before,
To mingle with the Universe, and feel
What I can ne'er express, yet can not all conceal.

ՃՀՉ

Շառաչաշարժ թաւալէր ի Սիմպլեգադ կապուտակ[98].
Երկայն տարիք, թէ ոչ յոյժ բազումք՝ այլ քաջ իսկ երկայն,
Յետ այնորիկ չիս եւ նա ներգործեցին հասարակ.
Արտօսր եւ վիշտք ինչ՝ յորմէ սկըսաք՝ ըզմեզ Թողին յայն.
Բայց ոչ ի զուր զմահացուս հատաք անցաք զասպարէզ.
Առաք եւ մեք ըզմեր վարձ, եւ աւասիկ ն՝ աստանօր.
Քանզի կարեմք դեռ բերկրիլ յարեգական շողուտր,
Հընձել հըրճուանս ի յերկրէ եւ ծովէ այնպէս սիրունս՝
Որպէս թէ չիք որ խառնվէ յերկրի զսոցա պարզութիւնս:

ՃՀԼ

Ո՜հ, ո՞տայր ինձ երթալ կալ յանմարդաճայն անապատ
Մի լոկ Ոգի գեղեցիկ հուպ ունելով արբանեակ.
Ո՜տայր ըզբնաւ մարդկութեան ազգաւս առնել ինձ ապաստ
Եւ չտեսլով եւ ոչ զոք սիրել ըզնէ միայնակ:
Ո՜վ դուք տարերք, յորոց յիյզ եւ ի բարբառըս վըսեմ
Թրւիմ եւ ես ամէառնալ ինքն ի վէճակ վերադրձ
Ո՞չ կարիցեք դուք ընորհել ինձ արարած մի այդպէս:
Խաբիմ արդեօք կարծելով զդոսա բնակեալ շատ ուրեք.
Թէ եւ, ո՜հ, մեզ կենակցիլ նոցին՝ տրւեալ դուն երբեք:

ՃՀԸ

Ձ՛ի հեշտալիք են անտառք անճանապարհք եւ անկոխք.
Ո՜հ, զի զմայլիչ է ոգւոց ափըն լըռին մենաւոր.
Ընկերութիւն է անքոյթ զոր ոչ խառնվէն այլ ամբոխք
Ի խոր անդունդըս ծովուն, ու ի մեռունչս անդ՝ ձայն դաչնաւոր:
Ոչ Թէ պակաս ինչ ըզմարդ, այլ շատ սիրեմ ըզքնութիւն.
Քանզ՝ ի սմանէ տեսութիւնքն այն՝ որով զանձն իմ կորզեմ
Ցամենայնէ յոր եղէ եւ յոր լինելըս կարեմ,
Աւ ի հեղուլ եւ խառնիլ ընդ տիեզերս, եւ ըզգալ
Իրս՝ զոր յայտնել ոչ կարեմ, այլ ոչ իսպառ եւ լուռ կալ:

CLXXIX

Roll on, thou deep and dark blue Ocean — roll!
Ten thousand fleets sweep over thee in vain;
Man marks the earth with ruin — his control
Stops with the shore; — upon the watery plain
The wrecks are all thy deed, nor doth remain
A shadow of man's ravage, save his own,
When, for a moment, like a drop of rain,
He sinks into thy depths with bubbling groan,
Without a grave, unknell'd, uncoffin'd, and unknown.

CLXXX

His steps are not upon thy paths, — thy fields
Are not a spoil for him, — thou dost arise
And shake him from thee; the vile strength he wields
For earth's destruction thou dost all despise,
Spurning him from thy bosom to the skies
And send'st him, shivering in thy playful spray
And howling, to his Gods, where haply lies
His petty hope in some near port or bay,
And dashest him again to earth: — there let him lay.

CLXXXI

The armaments which thunderstrike the walls
Of rock-built cities, bidding nations quake,
And monarks tremble in their capitals,
The oak leviathans, whose huge ribs make
Their clay creator the vain title take
Of lord of thee, and arbiter of war;
These are thy toys, and, as the snowy flake,
They melt into thy yeast of waves, which mar
Alike the Armada's pride, or spoils of Trafalgar.

ՃՀԹ

Շարժվեաց խորին ովկեան ալեօքըդ Թուխ կապուտակ
Զուր ըզմկանամբ քովք քարշին գընան տորմիղք բիւրախուռմբ .
Զաւերաճու ձեռացն հետս ձըդե մարդ ի ցամաք ,
Ամէ դիմակալ ծովուն եզը արձանանայ նըմին Թուռմբ :
Ի ջըրեզէնըն դաշտի դու միայն գործես խորտակմունս .
Զիք անդ մարդոյ նիշ քանդիչ , բայց մի եւեԹ , ինքն ինքնին .
Ցորժամ առ վայր մի հանգոյն խմբն կայլակն անձրեւին
Վիժէ ճողփմամբ ի քոյին յանդընդախոր յորձանուտ
Անդադար անպատան անլաց անսուտ ու անձանօթ :

ՃՁ

Ոչ ձըգեացեն տաք մարդոյ կընիքս ի քոյդ ասպարէս ,
Եւ ոչ տարցի նա զկապուտ քոյոյ հովտաց յաւարի .
Դու ամէարձեալ վերատցիս ու ի բաց ըզնա հեռքեատցես՝
Հենգնեալ զուժովն ապիկար՝ որով դըղըրդ տայ երկրի .
Աղընդամուղ դու տրտվմամբդ ըզնա ձըգեալ ընդ երկինս
Եւ ջախջախեալ խաղալիկ տաս ծըփանացդ ահագին ,
Մինչ նա դեռ դից իւր մաղԹէ , եւ առ օճան վըտանգին
Չուպնաւակաց ինչ կամ խորշ գուզնաքեայ տալ ժըտէ զաւազդ ,
Եւ դու վարեալ արկանես ի ցամաք . Թող կացցէ անդ :

ՃՁԱ

Որինախարխար մենքեննայք որձաքարից դըղեկաց
Սարսեցուցիչքն այն ազանց բախմամբ Թընդից շանԹաԹափք ,
Իըրդուեցուցիչք ազգայից յիշխանանիստ քաղաքաց ,
Կիտահասակ կաղնեկուռ եւ լայնակող նաւափայտք
Ձոր պանծացեալ մեծամիտ հաստիչք նոցուն կաւեղէնք՝
Կոչէն զանձինս ծովիշխանս եւ յաղԹուԹեանց մարտագիրք ,
Դոքա զբօսանք են առ քեզ , եւ իբրեւ ձեան ձըւէնք ցիրք
Հալին յալեաց քոց փրփուրս , այնք՝ որ եղէնն ոտընհար
Ցխորտակեալն Արմագայ [96] եւ նըշխարաց Տրափակար [97] :

CLXXXII

Thy shores are empires, changed in all save thee —
Assyria, Greece, Rome, Carthage, what are they?
Thy waters wasted them while they were free,
And many a tyrant since; their shores obey
The stranger, slave, or savage; their decay
Has dried up realms to deserts: — not so thou,
Unchangeable save to thy wild waves' play —
Time writes no wrinkle on thine azure brow —
Such as creation's dawn beheld, thou rollest now.

CLXXXIII

Thou glorious mirror, where the Almighty's form
Glasses itself in tempests; in all time,
Calm or convulsed — in breeze, or gale, or storm,
Icing the pole, or in the torrid clime
Dark-heaving; — boundless, endless, and sublime —
The image of Eternity — the throne
Of the Invisible; even from out thy slime
The monsters of the deep are made; each zone
Obeys thee; thou goest forth, dread, fathomless, alone.

CLXXXIV

And I have loved thee, Ocean! and my joy
Of youthful sports was on thy breast to be
Borne, like thy bubbles, onward: from a boy
I wanton'd with thy breakers — they to me
Were a delight; and if the freshening sea
Made them a terror — 'twas a pleasing fear,
For I was as it were a child of thee,
And trusted to thy billows far and near,
And laid my hand upon thy mane — as I do here.

ՃՁԲ

Ափունքդ այդ՝ են պետուրհիւնք, փոխեալ համայն ի քէն զատ.
Ասորեստան ու Ելլադա, Հռովմ, կարքեդոնէ, ուր են արդ.
Ջուրք քո զնոսա մաշէին, մինչդեռ կային դեռ ազատ,
Որպէս յետոյ արկին անդ բըռնաւորաց ձեռք աղարտ։
Ափունքն այն խուժք եւ սըրտակք նըւաճեցան յօտարաց.
Անկմամբ նոցին՝ պետուրհիւնք յամայիս կորդ փոխեցան։
Դու ոչ այդպէս. կաս մընաս նոյն, բաց յալեացըդ գրուժան.
Կապոյտ գիմաց քոց չածէ ծիրըս ծընգեալք՝ ամանակ.
Իբր յայգու անդ ստեղծման քում հոսես եւ արդ նոյնգունակ։

ՃՁԳ

Ո՛վ հրաշափառ Հայկէ, յոր բարձրելոյն խակ ինքնին
Կերպարանի երեւոյթ՝ ի յոյղ ծըփանց մըրըրկաց.
Դու հանապազ՝ թէ քաոմնեալ եւ հողմահար, թէ լըռին,
Ի սիւք ու ի բուք, ի սահմանս սառնասուզակ բեւեռաց
Եւ ընդ թծնուտ արջնաթոյր այրեցածին խորշակաւ,
Անեզը անհուն եւ վըսեմ յաւերժութեան ես պատկեր.
Գահաւորակ անտեսին. ի նոյն հիւթոյ քում տարեր՝
Ջեռունք վըհիդ հաստեցան. երկիրս ամէն քեզ պատկառ,
Եւ դու սիգաս խաղաս տանք անհետազօտ մեծափառ.

ՃՁԴ

Էի եւ ես խանդակաթ ի սէր քոյին՝ ովկէան,
Եւ ըզքօսանք մանկութեան իմոյ եղէն՝ քո ալիք.
Սահիլ գընալ ի նոսին պըղըպջակաց քոց նըման.
Տըղայ տիոցս՝ ամենակոծ կոհակդ էին խաղալիկք.
Նոքին ինձ հեշտք եւ հաճոյք. ցըրտասարսուռ եւ թէ ծով
Աբկանէր ահ ինչ նոքօք, եր եւ երկեղն այն քաղցրիկ.
Քանզի նըման իսկ նոցին՝ էի եւ ես քո ուստրիկ.
Ցանձն ի ծըփանըդդ եղեալ եւ ի մեռոյ եւ հեռուստ,
Եւ իբր յայժմուս՝ գըգուէին ձեռք իմ ըզքաշ քո հարուստ։

CLXXXV

My task is done — my song hath ceased — my theme
Has died into an echo; it is fit
The spell should break of this protracted dream.
The torch shall be extinguish'd which hath lit
My midnight lamp — and what is writ, is writ, —
Would it were worthier! but I am not now
That which I have been — and my visions flit
Less palpably before me — and the glow
Which in my spirit dwelt is fluttering, faint, and low.

CLXXXVI

Farewell! a word that must be, and hath been —
A sound which makes us linger; — yet — farewell!
Ye! who have traced the Pilgrim to the scene
Which is his last, if in your memories dwell
A thought which once whas his, if on ye swell
A single recollection, not in vain
He wore his sandal-shoon, and scallop-shell;
Farewell! with *him* alone may rest the pain,
If such there were — with *you*, the moral of his strain!

ՃՀԵ

Ահա ես յաւարտ վաստակոցս հասի. եւ երգք իմ լըռեն.
Եւ նիւթ բանիցս յարձագանգ մ՝ անկեալ ի խոր մեռաւ դեռ.
Աշուրջք երկայն երազոյս՝ արդ ըզլուծումն խընդրեն.
Թող շինջի ջահ՝ որ զկանթեղն իմ ցպտամէջ լուցանէր:
Որ ինչ գրեցաւըն գրեցաւ. ո՞ տայր թէ էր լաւագոյն.
Ահա ես ոչ եւս եմ նոյն ինքն՝ որ ինչ երբեմն ես էի.
Ցաճին տեսլեանցս երեւոյթք զինեւ նըւազ ըզգալի.
Եւ որ երբեմն ի յոգիս բնակէր ի ներքըս բոց վառ,
Արդ դողդոջուն եւ նըւազ, եւ անկանի շինջափառ:

ՃՀԹ

Բարեաւ մընայք. — ձայն յաճախ կրկնեալ յաճախ կրկնելի,
Բարբառ՝ որ տայ ոանառելոյ. — սակայն բարեաւ ինձ մընայք
Դուք՝ որ ըզհետ նժդեհին ընջեցայք յահն հպելի
Մինչ ի յետինըն տեսիլ: — Եթէ խորհուրդ մի միակ
Ի խորհըրդոց անդ նորուն կացցէ ի ձեզ անմոռաց,
Թէ ծածանեալ ծըփիցի զձեօք մի եւեթ յիշատակ,
Ապա նա ոչ վայրապար կըրեաց զկօշկին եւ խեցեակ [38]:
Ողջամբ մընայք. վիշտք, թէ կայր ինչ վիշտ, նըմա լոկ թողջին,
Իակ կըրթական նըւագացըն հրահանգք՝ այն ձեզ բաժին:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

1. Իբրեւ նախերգանս իմն կարգեցաք զայս տուն, որ է ճժ տուն գ երգոց Ներդուածոյն Պանդխտութեան Արուդեայ Ասպետի:

2. Անխբաղ Կարքեդոնացի:

3. Կից յորմն բարձր ապարանից զքսիցն Վենետկոյ եւ յորմն բանտի քրէական յանցաւորաց՝ արկեալ կայ կամուրջ յարկածածուկ ի վերայ ջրանցից. ընդ այն անցուցանէին յատենէ ապարանիցն ի տեղի պատուհասին՝ դատապարտեալս ի մահ կամ ի զնդան մշտնջենաւոր. վասն այնորիկ կոչեցաւ նա կամուրջ հառաչանաց, Ponte dei Sospiri.

4. Կիւբելէ, ըստ Ցունաց առասպելեացց դիցուհի պաշտպան շէնից եւ քաղաքաց, վասն որոյ կերպարանեն զգլուխ նորա ի խոյր կամ՝ թագ աշտարակազարդ, բերելով զձեւ մահարձանաց պարսպաց:

5. Գաստոյ (Գորգուադոյ) դերագոյն դիւցազներգակ քերդողաց Իտալացւոց, որ երգեաց զՅերուսաղէմ ազատեալ. յորմէ հատուածս եւ ցուցս ի բերան առեալ երգէին յաճախ վենետկեցիք յածելով թեթեւաստահ նաւակօք իւրեանց (զոր կոչեն) ի մեծ ջրանցս եւ ի ծովալիճն իւրեանց:

6. Գերահռչակ միակամար կամուրջն արկեալ ի վերայ մեծի ջրանցիցն որ յերկուս բաժանէ զքաղաքն Վենետկոյ:

7. Անձինք թատերգուԹեանց Շէքսպիրայ. Շայլոգ է Հրեայն ի վաճառականն Վենետկոյ, — Մաւրիկն է ՕԹելլոյ (ա. 17):

8. Բանք մերն Բրասիդեայ Սպարտացւոյ, զոր ասաց առ այնոսիկ որք զքաղաքուԹիւն որդւոյ իւրոյ գովէին:

9. ՍովորուԹիւն էր դքսից Վենետկոյ խաղալ ամի ամի (ի տօնի Համբարձման) նաւագնացմամբ հանդիսիւ ի խորս Ադրիական ծովու եւ արկանել մատանի մի, իբրեւ նշանակ փեսայուԹեան Վենետկոյ ընդ ծովին. եւ նաւ դքսին կոչէր Պուչէնթորոյ Bucintoro, որ Թարգմանի Եղնաջուլ: — Սոբջ Մաւրիս, կաԹուղիկէ տաճարն է եւ հրապարակն իսկ որ առաջի նորին. ի գլուխ կամարի մեծի գրան գաւԹի եկեղեցւոյն կայ ոսկեքանդակ պատկեր առիւծու, նշանակ՝ աւետարանչին Մարկոսի:

10. Գերմանացւոց ինքնակալն Փրետերիկ Շիկամօրուս, որ յետ քանամեայ մարտից եւ հակառակուԹեան ընդ Հայրապետս Հռոմայ եւ ընդ Իտալիոյ, յամին 1177 եկն ի Վենետիկ, ուր կանխեալ էր քան զնա Պապն Ագէքսանդր Գ, եւ խնդրեալ ներումն հաշտեցաւ ընդ նմա եւ ընդ Իտալացւոց:

11. Նոյն ինքն Շիկամօրուան, զի էր ի Սուաբեան տոհմէ. իսկ տէրն Աբեգան կայսրն Ասարիոյ է:

12. Ենրիկոս Տանտոլոյ դուքս Վենետկոյ 85 ամաց էր յորժամ ընտրեցաւն ի դքսուԹիւն, եւ ամաց գոլով իննսուն եւ հօԹանց դաշնակցեալ փառագական տօրմիցն խաղաց եւ էառ զԿոստանդնուպօլիս յամին 1204:

13. Ի ներքոյ նախայիշեալ առիւծուդ (9) ի կիսաբոլոր կամարի անդ կանգնեալ կան չորք ձիք պղնձիք ոսկեզօծք, զորս յառաջման Կոստանդնուպօլսոյ բարձին անտի Վենետկեցիք, ուր ի Հռոմայեայ փոխադրեալ էր Թէոդոսի կայսեր. եւ ի Հռոմայեցւոյ աւանդեն Տրդատայ կամ ՏիրիԹայ Հայոց արքայի ընծայ ինքնակալին. իսկ ի Հայս Թուի բերեալ ի Տիգրանայ Միհնոյ կամ յԱրտաշիսէ Աբգարեանէ ի ժամանակի արշաւանին իւրեանց յԵլեազդա եւ ի կղզիս: Ցելս անցելոյ դարու Փռանգաց տիրեալ Վենետկոյ տարան գձին ի Բարիզ եւ անտի փոխեցան ի Վենետս, եւ վերստին դարձուցան ի տեղի իւրեանց, մայց սուղ ինչ կապտեալ ի սարից եւ ի զարդուց:

14. Պետրոս Դորիա առաջնորդ Գենուացւոց, էառ զԳիոճա քաղաք հուպ ի Վենետիկ, եւ յաղերեալ Վենետկեցոց ի հաշտութիւն ապառնայր զենու զօրութեամբ մոռնել ի Վենետիկ եւ առնձ արկանել անսանձ ձիոցն պղնձեաց: Այլ վերպեցաւ ի յոտոյ եւ ի կենացն միանգամայն. եւ պարտեալ Գենուացւոց (յամին 1380) անձնատուրք եղեն ի Վենետկեցիս:

15. Ձայր վատ զնասպարծ կամ զապիկար Բանդալն Pantalone կոչեն Վենետկեցիք, եւ յաճախ յածի այս անուն ի բերանս նոցա առ առակէ եւ նշաւակէ. քերդողս ստուգաբանէ զանունս ի Բիանդա-լէոնէ Pianta-leone բառից, որ նշանակեն ըստ ձայնին պնդող առիւծ. եւ առ միտս, զի Վենետկեցոց նշան ազգի եւ դրօշոյ էր առիւծ, եւ նուաճեալ քաջութեամբ քաղաքս եւ բերդս բազումս զնոյն նշան ձողաբարձ անկէին. վասն այնորիկ առիւծապոռնիկ կոչեցան:

16. Պատմէ Պլուտարքոս ի վարս Նիկիասայ զԱթենացւոց գերելոց ի Սիրակուսացւոց երգել ի սփոփանս իւրեանց եւ յողբ գերչացն զտաղս Եւրիպիդեայ, եւ այնու շնորհս ազատութեան գտանել ի նոցանէ:

17. Օդուէյ, Otway, թատերգակ անգղիացի, ծ. 1651, մ. 1685. որ գրեաց զողբերգութիւնն Ալեքսանդրիոն վենետկոյ (ի Սպանիացւոց): — Ռետգլիֆ, Radcliffe, կին վիպասան անգղիացի, ծ. 1764, մ. 1823. յիշի ատ վասն վիպասանութեանն կոչեցեալ Գաղնիկ ոռոնդոյ: — Շիլլեր, գերագոյն քերդողաց Գերմանացւոց, որ գրեաց եւ վիպասանութիւնս երկուս՝ յորս զվենետկոյ սովորոյթս եւ բարս նկարագրէ, զմին կոչեցեալ Թանգար վենետկոյ, եւ զմիւսն Տէսդեմոնա կամ Հայ: — Շէքսբիր, գերագոյն ողբերգակ բանաստեղծից Անգղիացւոց. որոյ է եւ Օթելլոյ կամ Մաւրին (Սեաւ) վենետկոյ ողբերգութիւն նշանաւոր:

18. Շատ սիրեալ եւ ոչ սակաւ ժամանակս եկայ քերդողն ի վենետիկ, ուր եւ զմահն մի քերդուածոյս գրեաց:

19. Սակայն լաւ եւս լինէր ազնուագոյնս ինչ ընծայել մարդոյ համբերութեան օրինակս քան զողջ ապուշ եւ զդայլ գիշատիչ:

20. Փրիուլ կամ Ֆրիուլ, երբեմն մարզ վենետկոյ, սահմանա-

կից Խատրիոյ, այսպէս կոչեցեալ յանուն քաղաքին Փորոն Յուլեայ, Forum Julii.

21. Հռետեան բարձունք, Rhætia, Ալպեայ լերինս, ի սահմանակցութեան Հելուետիոյ, Դիրոլայ եւ Լոմպարտիոյ:

22. Մեդոակոն մեծ ըստ նախնեաց, այժմ Պրենդա գետ, յանուն Մեդոակեան տոհմի Հռետիոյ, ոռոգանէ զգաւառս վենետկոյ:

23. Արկուա, Arqua կամ Արկուատոն, Arquato, գիւղ Պատաւիոնի (Բատուա), յորում եկեաց Պետրարքա բանաստեղծ դյետին ամս կենացն եւ մեռաւ, յ'18 յուլիսի, 1370. եւ թաղեալ կայ անդէն ի բացօթեայ շիրմի. եւ պահի ցարդ տունն եւ սենեակն եւ կահք սենեկին, որոց կայք ելանեն եկք եւ ընկիք խաչիոյ, իբրեւ յիշատակաց քերդողի եւ տարփաձուին Լաւրայի զոր երգեացն յաճախ. եւ թարգմանի Լաւրա՝ Դափնի:

24. Փերրարա, Ferrara քաղաք ամուր ի պետութեան Հռովմայ, յ'ծԳ դարու ժառանգութիւն եղեւ Եստեան տոհմի, որ պայծառացաւն անդ ղբսութեան շքով ի ծԵ եւ ի ծԶ դարս:

25. Տոն բանտին յորում արգել Ալփոնսոս Եստեան գուքս զՏորկուատոս Դասսոյ բանաստեղծ, զոր եւ ցայսօր ցուցանեն քննասիրաց. որում եւ քերդողս անգղիացի կայց ելեալ եւ ժամս ձիգս ասեն եկաց ի նմին միայնիկ:

26. Գրոֆիա անուանի ճեմարան կամ ժողով գիանոց խոսալացւոց, որք զմեծն եւ զպանծալի բառարան ընդունին իւրեանց հրատարակեցին, եւ դատաստան նոցին օրէնք համարին. բայց խստութեան օրինաց նոցին կամ չհաւանութեանն յաղթող ասէ քերդողս զԴաւսոյ, նղնպէս եւ անհաշառ բանադատութեան Պոալոյի քերդողի գաղղիացւոյ, որ ոչ հաւանէր՝ ըստ Պայըլի՝ թէ յաղթիցէ խոսալացին՝ գաղղիական հոմանաձայն եւ տաղտուկ տաղաչափութեան. սակայն չափազանց թիւի մեղադրութիւնք, անմարթ է զգօն ականջաց չզգալ զզերազանց ներդաշնակութիւն խոսալական լեզուի եւ չափաբանութեան:

27. Դժոխերգու պոէտն եւ Տուսկեան հայրն եւ Վաղկունն

նոյն ինքն է Տանդէ հայր իտալացւոյ քերդողական լեզուի. որ յերիս քերդուածս երգեաց զԴժոխս, զքաւարան եւ զԱրքայութիւն, եւ զերեսին միանգամայն քերդուածն կոչեաց Աստուածային խաղալիկ կամ Թատր. La divina Commedia. — Ասպետաց դովասանն է Արիոստոյ որ ի դիւցազնական քերդուածն Օռլանդ Ֆուրիոզ կամ Դիվոդոպ՝ Orlando Furioso, երգէ զկրօնս եւ զարարս արի արանց եւ ասպետաց միջին դարուց. եւ նմանեցուցանէ զնա քերդողն՝ Սկոտայ (Walter Scott) գերահռչակ արձակաբան վիպասանի Սկովտացւոյ մերոյ դարուս հեղինակի. եւ փոխադարձաբար զհամազգին իւր կոչէ Արիոստոյ հիւսիսային, եւ զնապաստային՝ Սկոտ հարաւային:

28. Զառաջինն յեկեղեցւոջ Բենեդիկտեանց Թաղեաւ կայր մարմին Արիոստոյ ի Փերրարա, եւ կիսանդրի ի վերայ չերմին երկաթակուռ դամենեձեւ պատկաւ՝ որ շանթահար լեալ երբեմն անկաւ. զայս դեպս յիշէ քերդողս եւ ի չքմեղս կացուցանէ ի կասկածանաց Թերահաւատից:

29. Այս տունս եւ որ զկնի սորին՝ ազատ ինն Թարգմանութիւն է գերահռչակ չորեքտասանդողեայ Նուագի քնարերգակն իտալացւոյ Ֆիլիգայոյ, որ ընդ աննմանման դասի սրտառուչ եւ գեղեցիկ երգոց:

30. Մտերիմ բարեկամն Տուլլեայ Կիկերոնի Սերվիոս Սուլպիկիոս, որ նաւելով զնեաց զմեռացորդս քաղաքացն Ելլադայ:

31. Ազնոս գետ, Arnus, Arno. ոռոգանէ զԴոսկանա եւ Թափի ի միջերկրական ծով: — Եպտուրական Ալֆենք կոչէ զՓլորենտիա կամ Ֆիորենցա (Ծաղկաւան) մայրաքաղաք Դոսկանայ. որ է երկիր նախնի Եպտուրացւոց եւ Տուսկեանց:

32. Ազնուանի արձան Աստղկան որ Մեդիկեանն կոչի, մի ի հրաշակերտից յունական ճարտարութեան համարեալ. որում շուայլէ քերդողն գովութեամբ:

33. Հերա, Աթենաս, Ազնահիտ եւ Աստղիկ դիցուհիք վիճելով վասն գեղոյ իւրեանց՝ դատաւոր ասեն կացուցին զՀովիւ մի Տրովացի կամ զՊարիս զորդի Պրիամու Տրովացւոցն արքայի, եւ նա զԱստղիկ ասաց լինել գեղեցկագոյն:

34. Ա յսինքն՝ կապակաբար նմանողի :

35. Անուանի գերեզմանատուն փլոբենտիոյ :

36. Միքսպէլ-Անգելոս , Միքելանճէլոյ ըստ իտալացւոց , մեծա- հանճար անդրիագործ , ճարտարապետ եւ նկարիչ : — Աւե- փիերի գերագոյն ողբերգակ քերդողաց իտալացւոց :

37. Գալիլէոս , հայր նորոց աստեղաբաշխից , հեռադիտակին գտող , եւ չարժմանն երկրի վարդապետող :

38. Խորագէտ պատմագիր իտալացւոց :

39. Գանովա գերագոյն յանդրիագործս նորոց դարուց . ծնեալ ի Բոսսանիոյ փոքու գեղջ Դրեվիզ գաւառի , յամին 1737, եւ անդ թաղեալ , 1822 , ի հոյակապ տաճարին յիւրում դաս- տակերտի :

40. Պոգգաչչիոյ , հայր իտալական արձակ մատենագրութեան :

41. Զի քան զամենայն բարբառս իտալացւոց Տուսկեանն այս- ինքն Դոսկանացին քաջ ընտիր եւ հեշտալուր է :

42. Զհռաւենա քաղաք կոչէ յետին ամրոց տկարացեալ ինք- նակալութեանն Հռովմայ :

43. Տես զծանօթութիւնն 23 :

44. Անդրիագործութիւն եւ նկարչութիւն :

45. Լիճն Տրասիմենեայ այժմ կոչեցեալ Լիճ Բերուճիոյ , ի պատուհասն Հռոմայ , առ որով Աննիբաղ տարաւ յաղթու- թիւն մեծ ի վերայ Հռովմայեցւոց 217 ամս յառաջ քան զԹուականն Փրկչին :

46. Sanguinetto, Սանգուինեդդոյ , որ նշանակէ Արիւնիկ :

47. Կլիտումնոս գետ հնոյն Ումբրիոյ . կան աւերակք տաճարի յեզը նորա ընդ մէջ Ֆոլինիոյ եւ Սբոլեդոյ քաղաքաց Հռով- մայ պատուհասն :

48. Վեզլինդ կամ Դեռնեի, յանուն գեղջ եւ քաղաքի մեծ եւ անուանի սահանք ջրոց մերձ ի Ռեդի քաղաք Հռովմայ. գետն Վեզլինդ եկեալ յերկրէ Նեապօլսոյ եւ գործեալ գՋրվէժն թափի ի Ներա գետ:

49. Գետ դժոխոց ըստ ցունաց առասպելեաց:

50. Ապենին կամ Ապենեան լերինք, պար երկայնաչար որ Ալպեանց շառաւիղեալ ձգի ընդ բովանդակ երկայնն Իտալիոյ:

51. Կուտան լեառն, Jungfrau, բարձրագոյն ի Պեռնեան լերինս Ջուիցերեաց: — Սպիտակ լեառն Ալպեկայս, բարձրագոյն լերանց Եւրոպիոյ, 14807 ոտնաչափ գաղղիական:

52. Կիմեռ լեառն Յեպիտոս:

53. Շանթիակատար լերինք, ըստ ցունաց Ակրոկերաունոս, Յեպիտոս, որ է այժմ Եանեա:

54. Աորակեան լեառն, իբր 30 մղոնաւ ի հիւսիսի Հռովմայ, ի հնումն տաճար Ապողինի կայր ի գագաթանն, եւ փերոնիայ դիցուհւոյ ի տոորտոան. այժմ կոչի Ս. Ովնեսաէս կամ Ս. Սեղբեստրոս լեառն:

55. Որատիոս:

56. Նէոբէ ըստ առասպելեաց դուստր Տանտաղոսի, վասն բազմածնութեանն արհամարհեալ զԼատոնէ մայր Ապողինի եւ Արտեմիդայ՝ զսկեցաւ յորդւոցն, զորս նետահար սպանին հարազատքն ծեռք լատունեայ. եւ դիմ գթածեալ յանդադար արտասուս թշուառական մօրն՝ փոխեցին զնա յարձան սպառաժ, յորմէ հոսէին հանապազ ջրոյ կայլակք:

57. Կապիտոլիոն, Capitolium. բլուր եւ ակառն հնոյն Հռոմայ, ուր կառուցեալ էր գերահռչակ տաճարն Ջրամազդայ, զորոյ տեղի կալաւ մեծ եկեղեցի Տիրամօր ի Ե կամ Զ դարէ եւ այսր:

58. Եւբէա, յունական ձայն, ըստ բուն ազգային հնչման՝ Էւբէա, այսինքն կով:

59. Տուլլիոս Կիկերոն գերագոյն Հարտասանից. Վիրգիլիոս գերագոյն բանաստեղծից. Լիւիոս գերագոյն պատմագրից Լատինաց:

60. Զդրոմուելայ ասէ որ յ'3 ամենայն սեպտեմբերի յաղթեաց ի Տընապար, յ'3 նորին ամսոյ էառ զպսակ իշխանութեան, եւ դարձեալ յերրորդի աւուր նորին ամենայն մեռաւ:

61. ԶՊոմպէի անդրոյն ասէ, զհակառակորդին կեսարու, զոր ոմանք նոյն իսկ համարին՝ առ որով սպանաւն կեսար յատեան ծերակուտին:

62. Պղնձեայ անդրի Հռովմայ, որ է գայլ մատակ՝ յորմէ դիեն Հռեմոս եւ Հռեմուլոս երկուորեակք. յոր շանթ երբեմն անկեալ եւ խանդարեալ է:

63. Ի Մեծն Նաբոլէոն զոր ընդ Յուլիոսի կեսարու կշռէ եւ ստոբադասէ:

64. Ակնարկէ ի հռչակաւոր բանն կեսարու Veni, Vidi, Vici. եկի, տեսի, յաղթեցի. զոր գրեաց առ իւրն, յորժամ արագ արագ ի վերայ հասեալ փառնակայ որդւոյ Միհրդատայ մեծի ի պարտութիւն մատնեաց:

65. Եպերբ զարարս Նաբոլէոնի եւ ներքոյղ զվաշինկդոն զաստուարն Ամերիկացւոց:

66. Շերիմ է Կեկիլիայ Մետելլայ կնոջ կրաստոսի, կառուցեալ ի վերայ Ապպեան ճանապարհին:

67. Աւաղ հանճարոյդ, զոր այսպէս գերկրաւ զառածեալ անյուսութեամբ բարբանջես:

68. Մի յեօթեանից բլրոյ յորոյ վերայ կառուցեալ էր Հռոմ եւ են արդ ի նմա փուլք եւ ահագնաձոք հին շինուածոց:

69. Նոյն ինքն Պալատինեան բլուրն:

70. Աշտարակաձեւ սիւն յիշատակաց Տրայիանոսի կայսեր, յորոյ գագաթին ամփաթեալ կայ արձանդրի Ս. Պետրոսի առաքելոյ, որպէս եւ Ս. Պօղոսի ի սիւնն Աւրեղիանու կայսեր:

71. Տարպեան վախք ի Կապիտոլիոն լերին, ուր թաղեցաւ Տարպէա Տարպէոսի քաղաքապետի Հռովմայ, ընդ վահանօք եւ ընդ ապարանչանօք զինուց Սաբինացւոց որոց մատնեալ էր զՀռովմ, եւ վարձ մատուցեան խնդրեր զապարանչանս եւ զբազմամանեակսնոցին: Ընդ այն վախս գահավիժէին յետ այնորիկ զմանիկս Հռովմայեցիք:

72. Փորումն Forum. այսպէս կոչէին Հռովմայեցիք զգլխաւոր հասարակաց հրապարակ քաղաքացց իւրեանց, ուր ժողովէին ի քննութիւն դատաստանաց եւ առեւտրական իրաց:

73. Ր[illegible], ծ. ի Հռովմ, 1310, մ. 1354. Ճարտարասան քաջ եւ նօտար ի տան քահանայապետին. զորոյ բացաքնակութիւն յԱւինիոն պատճառս առեալ գրպտեաց զժողովուրդն եւ անուանեցաւ Տրիբուն յամին 1347. եւ թեկն ածելով զիշխանութեան բռնակալ Կոլոնոյ՝ մերժեցաւ ի միւսում ամին, եւ փախստական լեալ ձերբակալ եղեւ. գտեալ չնորհս վերստին դարձաւ ի Հռոմ եւ խառնեցաւ ի ծերակոյտն. եւ անդրէն զառածեալ յիշխանասիրութիւն սպանաւ ի ծառայէ մերոջէ:

74. Եգերիա կէն էր Նումայի Պոմպիլեայ ըստ Ովիդեայ. աղբիւր ջրոյ զործեաց ի քարայրի, յաւերժից նուիրեալ Հարանց. եւ կայ մնայ ցայսօր զչիմողին կրելով զանուն. եւ է վայր զբօսանաց տիկնայց Հռովմայ:

75. Կոլիսէ Colisæus, կամ փլաւեան ամփիթէատրոն, մեծագոյն թատերց Հռովմայ, որ տաներ արս իբրեւ լինն բիւր. եւ ուր յաճախ գազանամարտքն լինէին, եւ կոչեցաւ այսպէս վասն անհեղեղ մեծութեանն, քանզի Կոլօս մեծ եւ խոշոր լսի ըստ յոյն լեզուի: Մեծագոյն է ի մնացուածս աւերակաց շինուածոց նախնեաց, եւ տակաւին կանգուն կայ մեծաս մասամբ:

76. Ներմեսիս, դիք վըիժուց ըստ առասպելեաց, Աբրամազդայ եւ Հարկի դուստր, կամ Ովիդիանու եւ Գիլերոյ, զոր կերպարանեն թեւաւոր, կրելով օձս եւ շանթիս:

77. Որեստէս որդի Ագամեմնոնի սպանելոյ կամակցութեամբ կնոջն Կլիտեմնեստրեայ. պատուէր առեալ յանուրջս ի հօրէն՝ ապան զնայր իւր, վասն որոյ զամս բազումս տանջիւր յԱրհաւբաց դժոխայնոց եւ փախստական լինէր, մինչեւ շի-

Ջաւ ցասումն դից. զայս դէպս առին յողբերգել քերդողք Հարտարք :

78. *Յանոսեան ակնարկութիւն. — Յանոս ըստ առասպելեաց որդի էր Ապողընի, եւ գաղթականութեամբ անկեալ Իտալիա կառոյց դաստակերտ մի ի վերայ միոյ ի բլուրց Հռոմայ, եւ ասպնջական լեալ Սատուռնոսի դից հալածելոյ յերկինից՝ ընկալաւ ի նմանէ շնորհս տեսանելոյ զանցեալն եւ զապառնին. վասն այնորիկ եւ կրկնադէմ կերպարանի :*

79. *Ակնարկէ ի գեղաքանդակ կճեայ անդրի սուսերամարտի օրհասականի, որ համարի գաղափարեալ ի պղնձեայ անդրոյն Ճուլելոյ ի Կաեսիլլոսէ :*

80. *Պանթէոն, որ ըստ յունական ձայնին նշանակէ Ամենայն դից, զի ամենայն խառնաղանճին Ոլիմպեայ նուիրեցին զայն Հռովմայեցիք. կանգուն կայ մեծատարր տաճարն բոլորշի. վասն որոյ եւ այժմ Բոլորակ կոչի ի ռամկաց, Rotonda, եւ նըւիրեալ է Մարտիրոսաց Տիրամօր :*

81. *Աչխինքն որք աղօթեն շարիւք ուլանց, որ է համարիչն կամ վարդապանն :*

82. *Ամանդուխեամբ պատմի ցարդ ի Հռովմ Լեփ գհայր դատապարտեալ ի բանտ մահու մուռցաներ դուստրն Ցնողաեր իւրով իսկ կաթամբ. եւ տեղի բանտին ասէն էր այժմեան Ս. Նիկողայոս եկեղեցւոյն վայր :*

83. *Ադրիանու դաստակերտ, այժմ կոչի Ս. Հրեշտակի բերդ, Castel Sant' Angelo. Ադրիանոս կայսր շինեաց զայն անհեթեթ իմն շինիւմ վասն իւր, Թերեւս մեծագոյն շինուածց եւ անմանաղոյն. պատապարան է արդ ամուրեան Հռովմայ :*

84. *Գմբեթի տիեզերահռչակ մեծի տաճարի Ս. Պետրոսի :*

85. *Ի բնագրին՝ Ալպեան լեառն :*

86. *Լպոկովն որդի Պռիամու եւ քուրմն Ապոլլոնի, հակառակեր իշխանաց Տրովադաց չմուծանել ի քաղաք անդր զձին փայտակերտ զոր Յունք նուէր իմն կարծեցուցանէին առնել, եւ հարկանէր զնոյն գեղարդեամբ. եւ ահա օձք վիշապք պա-*

տեալ զնովաւ եւ զերկոքումբ որդեկօքն՝ հեղձուցանէին չաբաստանջ։ Հրաշակերտ անդրի սոցա հելլենական ձեռին գործ գտաւ ի սկիզբն ԺԶ դարու յագարակս Ցիտոսի եւ եդաւ ի վատիկան։

87. Ապոլոնի անդրին գեղեցկագոյն համարեալ յառնապատկերս ճարտարեալս ի նախնեաց, կայ ի պատշգամաձեւ ժայռ դահլճի մի ի վատիկան, վասն որոյ եւ Ապոլոնին պատշգամին կոչի, Apollo del Belvedere.

88. Ողբայ զմահ կաբլըդեայ դստեր Գէորգեայ Ե թագաւորին Անգղիոյ, որ գժուարաճին լեալ մեռաւ. որպէս եւ ուստրն նորընծայ։

89. Նեմի գիւղ մերձ յԱլպանոյ, ուր ասեն ճեմիլ Եգերիայ ի պուրակս տաճարին Արտեմեայ։

90. Ալբանոյ, քաղաքաւան, ամարանոց Հռոմայեցւոց, առ երի հնոյ քաղաքին երկայնն Ալբայ։

91. Սկիզբն նենէականին գիւցազներգութեան վիրգիլեայ։

92. Կիկերոնի Տուլլիոսի ամարաստուն եւ ագարակք ի Տուսկուլոն գեղջ, որ է այժմեանս Ֆրասկատի։

93. Ոտգդա ձիովանէ գիւղ է աւերակ, եւ մասն հնոյ երկրին Սաբինացւոց։

94. Կալքէ եւ Ալբիւլէ անուանք արձանացն Հերակլի զոր կանգնեաց ի կիրճս Կադեսայ, այսինքն են հրուանդանք ճիպրալտարայ։

95. Սիւմպլեգադ կամ կիւանեան պարեխք ի Թրակեանն վտափոր ի մուտս Սեաւ ծովու։

96. Ադմադա, այսպէս կոչէր Աչիլլեին անուանեալ տորմիղ նաւաց հարիւր երեսուն եւ հնգից, զոր փիլիպպոս Բ արքայ Սպանիացւոց յամին 1588 առաքեաց ընդդէմ Անգղիացւոց. այլ մրրկեք եւ թշնամիք վատթարեցին զայն, եւ սակաւք ի նաւացն զերծան։

97. Տրափակար Հրուանդան ի կրճին Ձիպրալդարայ, ուր Նել-սոն Տովապետ անգղիացի խորտակեաց զնաւատորմն Փառա-կաց եւ Պատնիայոց, եւ ինքն վիրաւորեալ մեռաւ, (1805). Յետ մարտին մրրիկ մեծ անկեալ ի Տովն տագնապ եւ վնաս անհնարին հասոյց յաղթողացն եւ յաղթելոց:

98. Նոչիկ՝ նշան բազմաշքջուխեան պանդխտի, եւ խեցեակն առաձեռն ըմպանակ նորին:

Price S. 75.

PR 4357 A1 1860

Byron, George Gordon Noël Byron
Childe Harold's pilgrimage: Italy

PLEASE DO NOT REMOVE
CARDS OR SLIPS FROM THIS POCKET

UNIVERSITY OF TORONTO LIBRARY